Ազգ
Azg

23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 172 (4552)

ISSN: 1829-1651

# Բարոզո. «Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին ներկա պահին անհնար է»

**Եվրոմիության հանձնաժողովի նախագահը երեքշաբթի օրն արած հայտարարությունը հիմնավորել է հետեւյալ կերպ. «Գլխավոր պատճառները երկուսն են. նախ` Թուրքիայի եւ ԵՄ-ի միջեւ առկա են լուրջ մշակութային տարբերություններ, երկրորդ` Եվրոմիության ներսում փոխվել է Անկարայի նկատմամբ վերաբերմունքը` կապված վերջինիս եւ Իրանի միջեւ հարաբերությունների մերձեցման հետ»:**

**Բարոզոն նաեւ ընդգծել է, որ ԵՄ անդամ բոլոր 27 երկրներին չի գոհացնում Թուրքիայում մարդու իրավունքների իրավիճակը, ինչպես նաեւ Կիպրոսի հարցում դրսեւորած դիրքորոշումը: ԵՄ անդամ Կիպրոսին Անկարան մինչեւ այսօր հրաժարվում է ճանաչել որպես պետության, շրջափակած պահելով կիպրական տարածքի հյուսիսային մասը:**

# Ադրբեջանը շարունակում է մերժել ուժի չկիրառման համաձայնագրի առաջարկը

ՄԱԿ-ի կենտրոնակայանում Հայաստանի արտգործնախարարը սեպտեմբերի 21-ին մասնակցել եւ ելույթ է ունեցել 2000 թ. ՄԱԿ-ի գագաթաժողովի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակների իրականացմանը նվիրված գագաթաժողովին, որի ընթացքում անդրադարձել է Հայաստանում այդ ուղղությամբ կատարած եւ ձեռնարկվելիք քայլերին ու արձանագրված առաջընթացին:



Սույն համատեքստում, ըստ ԱԳՆ հաղորդագրության, **Էդվարդ Նալբանդյանն** անդրադարձել է նաեւ անվտանգությանը առնչվող հարցերին, հատկապես Հարավային Կովկասի տարածաշրջանում: «Ընդունելով, որ անվտանգությունը եւ զարգացումը սերտորեն միահյուսված են, Հազարամյակի հռչակագրում կառավարությունները հանձն են առնում ջանքեր չխնայել պաշտպանվածության ժողովուրդներին պատերազմի արհավիրքներից, ինչպես երկրների ներսում, այնպես էլ պետությունների միջեւ: Այդ առումով սպառազինությունների տարածումը շարունակում է վտանգ ներկայացնել ոչ միայն խաղաղության եւ անվտանգության, այլ նաեւ տնտեսական եւ սոցիալական զարգացման համար», նշել է արտգործնախարարը:

Նրա խոսքերով, դժբախտաբար, մեր տարածաշրջանում կան այդպիսի վտանգներ: «Ադրբեջանը շարունակում է մերժել ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման համաձայնության գալու առաջարկը», ՄԱԿ-ում հայտարարել է Նալբանդյանն, ընդգծելով, որ դա հակասում է ՄԱԿ-ի սկզբունքներին, որի հիմնադիրները միավորվեցին գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից զերծ պահելու նպատակով: «Այսօր մենք ականատես ենք Ադրբեջանի ռազմատենչ կեցվածքին, նրա ռազմական բյուջեի բազմապատկմանը, պատերազմական հռետորաբանությանը եւ սադրանքներին, ինչը սպառնում է տարածաշրջանի անվտանգությանը եւ կայունությանը»:

Տես էջ 2

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

# Կրկին С-300, կրկին կասկածներ

**Ռուսաստանի պաշտպանության նախարարության գլխավոր շտաբը երեկ պաշտոնապես հայտարարեց, որ Մոսկվան Իրանին չի տրամադրի երկկողմ վաճառքի պայմանագրով նախատեսված С-300 հակահրթիռային պաշտպանության համակարգը. «Եղել է ղեկավարության որոշում գործընթացը կասեցնելու վերաբերյալ, եւ մենք իրականացնում ենք», BBC-ի ռուսական ծառայության փոխանցմամբ` հայտարարել է գեներալ Մակարովը: Պաշտոնական Մոսկվան իր որոշումը հիմնավորել է, որ հակահրթիռային պաշտպանության համակարգի վաճառքի իրականացումը արգելված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի` Իրանի նկատմամբ սահմանած պատժամիջոցներով: Մինչդեռ ավելի վաղ ռուսաստանյան դիվանագետները պնդում էին, որ զինտեխնիկայի վաճառքը չի կարող արգելվել վերոհիշյալ պատժամիջոցներով: Միեւնույն ժամանակ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ նախագահ Մեդվեդեւը հրամանագիր է ստորագրել` «Ռուսաստանի համար որոշելու Իրանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցների ընթացակարգը»: Իր հերթին ՌԴ ՊՆ գլխավոր շտաբի պետ Մակարովը չի նշել, թե արդյոք համակարգը Իրանին չտրամադրելով Մոսկվան դադարեցնո՞ւմ է Թեհրանի հետ պայմանագիրն առհասարակ. «Տեսնենք, դա կախված է Իրանի հետագա քայլերից», ասել է Մակարովը:**

**Հավելենք, որ հենց Իրան ուղարկվելիք С-300-ի վերաբերյալ էր օրեր առաջ բարձրացված աղմուկը, ըստ որի համակարգը Թեհրանին չվաճառելու պարագայում Մոսկվան պատրաստվում է այն վաճառել Բաքվին: Հիշեցնենք` այս լուրերը Ռուսաստանը չհաստատեց, բայց եւ չհերքեց, մի բան միայն այսօր արդեն իսկ պարզ է` Մոսկվան С-300-ը չի վաճառի Իրանին:**

Հ. Ա.

# Աթաթուրքի փոխարեն «հայ է ստորագրել»

**Պարզվել է, որ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ստորագրությունը ստեղծել է մաթեմատիկայի եւ գեղագրության ուսուցիչ Հակոբ Վահրամը: Այս մասին տեղեկացնում է Panorama.am-ը` հղում անելով թուրքական Zaman պարբերականին: Աղբյուրի համաձայն` Հակոբ Վահրամի որդին` Տիգրան Չերչիյանը, դեռեւս կենդանի է (90 տարեկան) եւ բնակվում է Միացյալ Նահանգներում: «Ազգանունների մասին օրենքի ընդունման օրն էր: Երեկոյան մեր դուռը թակեցին մի ոստիկան, քաղաքացիական հագուստով մի անձ եւ մեջլիսի մի պատգամավոր: Մայրս բացեց դուռը: Տեսնելով ոստիկանին` կարծեց դպրոցում ինչ-որ պատմության մեջ եմ ընկել... Իսկ հայրս ողջ գիշեր մինչեւ լուսաբաց աշխատում էր գրասեղանի առաջ: Երկու ժամ հետեւել եմ նրա աշխատանքին: Թղթերի վրա ստորագրության նմուշներ էր կազմում: Առավոտ կանուխ նույն մարդիկ եկան եւ տարան ստորագրության բոլոր օրինակները: Եվ Աթաթուրքը տարիներ շարունակ իմ հայրիկի ստեղծած ստորագրությունն էր օգտագործում: Նա նույնիսկ շնորհակալական նամակ էր ուղարկել հայրիկիս», վերհիշել է 90-ամյա Տիգրան Չերչիյանը:**

Հ. Ա.

# Զինծառայողներին ծեծած ու ծաղրուծանակի ենթարկած մայորը կալանավորված է

***Ինտերնետ ցանցում հայտնված զինծառայողների միջեւ ոչ կանոնադրական փոխհարաբերությունների վերաբերյալ տեսանյութի կապակցությամբ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը հայտնում է հետեւյալը.***

17.09.2010 թ. ՀՀ ՊՆ ՌՈ-ից հաղորդում է ստացվել, որ ձեռնարկված օպերատիվ միջոցառումներով պարզվել է, որ ինտերնետում տեղադրված ժամկետային զինծառայողներին ծեծի ենթարկելու եւ խոշտանգելու տեսանյութում պատկերվածը տեղի է ունեցել ս.թ. հուլիսին N զորամասի տարածքում:

Նույն զորամասի զինծառայող, մայոր Սասուն Միքայելի Գալստյանը, ոգելից խմիչքի ազդեցության տակ ծեծի եւ ծաղրուծանակի է ենթարկել զորամասի ժամկետային զինծառայողներ, սերժանտ Գարիկ Նորայրի Հարությունյանին եւ շարքային Բակուր Ռոբերտի Եղիկյանին:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 375 հոդ. 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն: Գարիկ Նորայրի Հարությունյանը եւ Բակուր Ռոբերտի Եղիկյանը քրեական գործով ճանաչվել են որպես տուժողներ: Նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Սասուն Միքայելի Գալստյանին 18.09.2010 թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 375 հոդ. 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Առգրավվել է բջջային հեռախոսը, որով տեսանկարահանվել են նշված գործողությունները: Կատարվում են տեսանկարահանող զինծառայողի, նրա հոր եւ եղբոր հարցաքննությունները: Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

*ՀՀ ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# Հայազգի 5 մեղադրյալ Լոս Անջելեսում

54-ամյա Հակոբ Հովհաննիսյանը, որն աշխատել է Լոս Անջելեսում Հայաստանի հյուպատոսարանում եւ մեղադրվում է կեղծ փաստաթղթեր կազմելու մեջ, երկուշաբթի օրը դատարանում ընդունել է իր մեղքը: Այս մասին, «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, հաղորդում է Glendale News Press-ը` հավելելով, որ Հովհաննիսյանը մեղադրվում է արտաքսման ենթակա ապօրինի ներգաղթյալների, այդ թվում` մի քանի հանցագործների, կեղծ նամակներ տրամադրելու մեջ, որոնց միջոցով վերջիններս խուսափել են արտաքսումից: Դատավճիռը կիրառարկվի հաջորդ տարվա սկզբին, ակնկալվում է, որ Հովհաննիսյանը կդատապարտվի մինչեւ 5 տարի ազատազրկման: Նույն գործով կան եւս 4 մեղադրյալներ, որոնք դեռեւս դատարան չեն հրավիրվել: Նրանց թվում է Լոս Անջելեսում Հայաստանի նախկին հյուպատոս Նորայր Ղալումյանը, մյուս երեք մեղադրյալները նույնպես հայ են: Քննությանը հայտնի է դարձել, որ հյուպատոսարանի տրամադրած կեղծ նամակները վաճառվել են յուրաքանչյուրը 37 հազար դոլարով:

Ի դեպ, Ղալումյանը անցյալ տարվա հուլիսին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում հերքել էր իրեն ներկայացված մեղադրանքը:

Հ. Ա.

# Բրայզան մնաց առկախված` Ալիեւ-Օբամա հանդիպումից առաջ

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը երեքշաբթի` սեպտեմբերի 21-ին, ըստ Ամերիկայի հայկական համագումարի հաղորդագրության, հաստատել է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահի, ԱՄՆ պետքարտուղարի օգնականի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ Մեթյու Բրայզայի թեկնածությունը` Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պաշտոնում նշանակվելու առնչությամբ:

Բրայզայի թեկնածությանը կողմ է քվեարկել 17 սենատոր, դեմ` 2-ը` Ռոբերտ Մենենդեսը եւ Բարբարա Բոքսերը: Վերջինս նշել էր, որ թեեւ գնահատում է Բրայզայի երկարատեւ դիվանագիտական գործունեությունը, այդուամենայնիվ դեմ է արտահայտվում նրա թեկնածությանը, քանի որ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահը «ցույց չի տվել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի աճող ագրեսիային դիմակայելու կարողություն կամ ցանկություն»:

Դիվանագետի թեկնածությանը դեմ արտահայտված երկրորդ սենատորը` Ռոբերտ Մենենդեսը, մինչ այս քվեարկությունն էլ քննադատել է Բրայզային Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ սերտ կապեր ունենալու առնչությամբ, քանի որ դա կարող է ազդել որպես ԱՄՆ դեսպան անաչառ լինելու վրա:

Այժմ, ըստ ամերիկյան դիվանագիտական նշանակումների ընթացակարգի, Բրայզայի թեկնածությունը պետք է հաստատվի նաեւ Սենատի կողմից: **«Ազգը»** նախորդ համարներում տեղեկացրել էր, որ դեռեւս մայիսից առաջադրված Բրայզայի թեկնածությանը ընդդիմանում են հայամետ խմբերը` Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ նրա սերտ հարաբերությունների ու կապերի պատճառով: Օգոստոսի դրությամբ, սենատոր Բարբարա Բոքսերի պահանջով Բրայզայի թեկնածության քվեարկությունը հետաձգվել էր մինչեւ սեպտեմբերի կեսերը, երբ Սենատը վերադառնում է իր աշխատանքին:

Դեսպանի պաշտոնում ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահի հաստատմանը դեմ է արտահայտվում հատկապես Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, որի կարծիքով` «Բրայզան այն մարդը չէ, որ կարող է ճշտորեն ներկայացնել ամերիկյան արժեքները Բաքվում»: Այն ժամանակ հույս էր հայտնվել, թե եթե անգամ սեպտեմբերի 21-ին Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կողմ քվեարկի Բրայզայի թեկնածությանը, կլինեն սենատորներ, որ կշարունակեն արտահայտել Բրայզայի նշանակման առնչությամբ մտահոգությունները` նույնիսկ հանդես գալով կասեցման որոշումով:

Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պաշտոնը թափուր է մոտ 15 ամիս: Եվ այդ ժամկետը կարող է երկարաձգվել, քանի որ, Ամերիկայի հայկական համագումարի տեղեկություններով, արդեն իսկ սենատոր Բարբարա Բոքսերը հայտնել է Սենատի քվեարկությանը Բրայզայի թեկնածությանը վետո դնելու մտադրության մասին: Բոքսերի կողմից վետոյի իրավունքի կիրառումը նշանակում է, որ Սենատը լիագումար նիստում չի կարող քննարկել եւ քվեարկել Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնում Բրայզայի նշանակման հարցը: Նշենք, որ նման իրավիճակ էր ստեղծվել, երբ ԱՄՆ-ում քննարկվում էր Ռիչարդ Հոգլանդին Հայաստանում դեսպան նշանակելու հարցը, որն այդպես էլ իրականություն չդարձավ սենատոր Մենենդեսի վետոյի պատճառով:

Հետաքրքրական է, որ սեպտեմբերի 24-ին սպասվում է Ադրբեջանի եւ ԱՄՆ նախագահների հանդիպում, որի նախօրեին, եթե Բոքսերը կիրառի իր վետոյի իրավունքը, ինչպես արդեն հայտարարել է, ապա Ադրբեջանը էլի մի որոշ ժամանակ ԱՄՆ դեսպան չի ունենա իր երկրում:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ընթացիկ

# «Ակօսը» դպրոց է երիտասարդ սերնդի համար

Ստամբուլ այցելած հայ լրագրողներս «Ակօս» շաբաթաթերթում եղանք մի քանի անգամ, այստեղ մեզ զգում էինք ինչպես մի հայկական, բարեկամ խմբագրատանը: Տեռասում մի երկար սեղան կար, որի շուրջը հանդիպում էինք ակօսցիներին, մի բաժակ թեյի շուրջ զրուցում, խոսում պոլսո հայության խնդիրներից: «Ակօսի» զոհված խմբագրապետ Հրանտ Դինքի առանձնասենյակը, որ պահպանվում էր թանգարանի սենյակի նման, հուզիչ էր, հատկապես, երբ հոր մասին պատմում էր Հրանտի դուստրը՝ **Պայծառ Դինքը**:

«Ակօսի» խմբագիր Ռոբեր Քոփթաշն ասում էր, որ հայ-թուրքական հարաբերությունները շատ կարեւոր են իրենց համար՝ մեծ քայլ էր արձանագրությունների նախաձեռնումը, ժողովուրդները պետք է ճանաչեն իրար ու շփվեն, իսկ փակ սահմանով դա անհնար է: Իսկ որ արձանագրությունները սառեցին՝ մեղավորն, ըստ «Ակօսի» խմբագրի, թուրքական պետությունն է, որի պահվածքի համար ներքին քաղաքականությունը կարեւոր դեր խաղաց, այն է՝ թուրքական կառավարությունը ազգայնամոլների ճնշման տակ է, եւ քանի որ պայքարի շատ ճակատներ ունի ներքին եւ արտաքին խնդիրներում, ազգայնական շրջանակներն էլ դեռեւս մեծ ազդեցություն ունեն թուրքական կառավարության վրա, կառավարությունը հայկական թեմայով չի ուզում մի ավելորդ անգամ եւս ճնշման ենթարկվել, չի ուզում 2011-ի գարնանը կայանալիք ընտրություններում քվե կորցնել:

Ըստ «Ակօսի» խմբագրի՝ կառավարության շատ քայլերի դեմ լինելով՝ այդ մասին գրում են թերթում, բարձրացնում հարցերը: Հատկապես Աղթամարի Ս. Խաչի մասին շատ գրեցին, բայց, իհարկե, գրվում է պոլսահայերի հայացքով: Գրել, բայց երկխոսության դուռը չփակել իշխանության հետ՝ այս է «Ակօսի» դիրքորոշումը: Սա վախ չէ, այլ Թուրքիո հպատակների դիվանագիտություն՝ հարցերը փափուկ ձեւերով դնելով միայն կարելի է լուծել, համոզված է Ռոբեր Քոփթաշը. «Եթե երկխոսության կհավատանք, եթե կհավատանք, որ օր մը Ցեղասպանությունը Թուրքիան պիտի ճանաչի, ոչ թե դրսի ուժերի վրա պետք է հիմնվենք, այլ մեր երկու ժողովուրդների»:

«Ակօսին» մեզ ավելի մանրամասն ծանոթացրեց «Ակօսի» փոխխմբագիր Բագրատ Էստուկյանը: «Ակօսը» 24-էջանոց շաբաթաթերթ է, 20 էջը թուրքերեն է, 4-ը՝ հայերեն: Նյութերը հայկական կամ հայերին հետաքրքրող թեմաներով են: Նյութերը քաղվում են Հայաստանից, հայկական սփյուռքից, թուրքական օրակարգից, նաեւ՝ Թուրքիայի քաղաքական, մշակութային անցուդարձից: Ի թիվս այլ էջերի՝ կա նաեւ մամուլի էջ, որտեղ տեղադրվում են Սփյուռքի, Հայաստանի եւ Թուրքիայի մամուլից քաղված նյութերը, չնայած ամեն շաբաթ չէ այդ էջը: «Ակօսի» տպաքանակը 5-6 հազարի շրջանակում փոփոխական է, նայած իրադարձություններին, աշխարհի տարբեր երկրներում բաժանորդագրություն ունի, հայերն են բաժանորդագրվում: Իսկ երկրի ներսում հայերի հետ մեկտեղ ոչ հայեր եւս բաժանորդագրված են՝ թուրքեր եւ քրդեր: Դա այն զանգվածն է, որ հետաքրքրված է հայկական անցուդարձով, ուզում է



իմանալ՝ հայերն ինչով են զբաղվում, ի՞նչ են մտածում, ի՞նչ հոգսեր ունեն:

Փաստորեն Ստամբուլում միշտ եղել է հայկական մամուլ, սակայն հայալեզու ու հայատառ, իսկ «Ակօսի» 20 էջը թուրքախոս հայերի համար է: Սկզբում անմիջապես դավաճան անվանեցին թուրքալեզու 20 էջի համար, քանի որ Թուրքիայում (Ստամբուլում) ապրողները Եղեռնին զոհ գնացած ընտանիքների շառավիղներն են: Բայց ակօսցիները հայոց լեզվի գործածման նվազման խնդիր էին տեսնում, այդ պատճառով Թուրքիո մեջ հայերի համար թուրքերեն թերթ հրատարակելու անհրաժեշտությունը օրակարգային էր, ու թերթն իր առջեւ նպատակ դրեց թուրքախոս հայերին եւս չկտրել հայկականությունից, հայկական կյանքի ազդեցության շրջանակից դուրս չթողնել: Ստամբուլի 60-70 հազար հայերը փաստորեն երեք մամուլի օրգան ունեն՝ ամենամեծ տպաքանակ ունեցող «Ակօս» շաբաթաթերթը, մյուս երկուսը՝ «Մարմարա» եւ «Ժամանակ» օրաթերթերն՝ իրենց պատմական անցյալով: «Ժամանակը» 102 տարի անխափան շարունակում է հրատարակվել՝ 4-էջանոց օրաթերթ է, «Մարմարան» 70 տարվա անցյալ ունի եւ դարձյալ 4-էջանոց է: Երկու օրաթերթերն էլ տպաքանակի նվազում ունեն, քանի որ հայախոսների թիվն էլ նվազում է, ընթերցողների թիվը՝ նույնպես, իսկ «Ակօսը» իրականացնում է թուրքախոս ընթերցողին ներգրավելու խնդիրը:

Հրանտ Դինքի հետմահու ազդեցություններից մեկը «Ակօսի» փոխխմբագիրը աննկարագրելի թվով թաքնված հայերի բացահայտումն է համարում, որոնք հրապարակ եկան՝ հայտնելով, որ իրենք հայ են: Հայ լինելու համար Հրանտի սպանությունն այնպես էր ազդել այդ շերտի մարդկանց վրա, որ նրանք, հայտնի դարձնելով իրենց հայկական ծագումը, այդպես էին իրենց զորակցությունը հայտնում Դինքին եւ նրա համոզմունքներին: Դերսիմ քաղաքի թուրքացած հայերից մեկը սպանության լուրն առնելով՝ գիտակցությունը կորցրել է, որից հետո երկու-երեք օր ենթագիտակցական քայլեր է արել եւ արածը գիտակցել է այն պահին, երբ Ստամբուլի տոմս վերցնելով՝ ավտոբուս է բարձրացել, այնուհետեւ ինքն իրեն գտել «Ակօսի» խմբագրատան մոտ, Դինքի համար ցավող ու բողոքող ժողովրդի մեջ: Այդպիսի օրինակներ շատ են եղել, «Ակօսի» տպաքանակը եռապատիկ-քառապատիկ շատացել է սպանությանը հաջորդած օրերին:

«Ակօսի» մակարդակը հայ հասարակության ընդհանուր մակարդակից եւ թուրք թերթ սպառող հասարակության մակարդակից բարձր է, այդպես գնահատեց փոխխմբագիրը. «Դժվար ընթեռնելի թերթ է Ակօսը», ասաց, քանի որ թուրքական թերթերը գունավոր, մերկ նկարների շնորհիվ են սպառվում, իսկ «Ակօսի» ընթերցողները երկրի առաջնակարգ մտավորականներն են: «Ակօսում» աշխատելը վարձատրության առումով որոշ չափով զոհողություն է պահանջում, լավագույն պայմանները չէ, որ առաջարկվում են, բայց «Ակօսը» դպրոց է երիտասարդների համար, որոնք մամուլի ասպարեզում, մարդու իրավունքների եւ ժողովրդավարության խնդիրներով հետաքրքրված են, եւ այս դուռը միշտ բաց է նրանց համար՝ Հրանտ Դինքի օրվանից եկած ավանդույթով: «Ակօսում» 25-30 հոգի է աշխատում: Իշխանության հետ լավ են Դինքի սպանությունից հետո: «Ակօսում» արգելված թեմաներ չկան: Ավելի վաղ ցեղասպանություն բառն ընդհանրապես Թուրքիայում արգելված էր, բայց «Ակօսն» այդ բառը միշտ գործածում էր ու թանկ հատուցեց դրա համար, իսկ այժմ ոչ ոք դա չի արգելում:

«Ակօսի» դռները մեր առջեւ էլ բաց էին ու շատ հետաքրքրական զրույցներ ունեցանք այնտեղ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

# Հայաստանի տնտեսական աճը՝ 3,1 տոկոս

### *Սակայն օգոստոսին կտրուկ աճ է արձանագրվել հուլիսի համեմատ*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-օգոստոս ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը կազմել է 3,1 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 2 տրիլիոն 42 մլրդ դրամ: Տնտեսական աճի տեմպը շարունակել է նվազել, քանի որ հունվար-մայիս ամիսներին կազմել էր 8,8 տոկոս, հունվար-հունիսին՝ 6,7 տոկոս, հունվար-հուլիսին՝ 4 տոկոս: Միաժամանակ, օգոստոսին հուլիսի նկատմամբ արձանագրվել է կտրուկ՝ 79,3 տոկոս աճ, այն դեպքում, երբ հուլիսին հունիսի նկատմամբ արձանագրվել էր 19,2 տոկոս անկում: Տնտեսական աճի տեմպի նվազումը դարձյալ պայմանավորված է գյուղատնտեսության արտադրանքի եւ շինարարության ծավալների նվազմամբ, թեեւ օգոստոսին այս ճյուղերը նույնպես աճի ցուցանիշներ են ունեցել:

Այս տարվա հունվար-օգոստոսին աճի տեմպը պահպանվել է արդյունաբերությունում՝ 11,5 տոկոս, եւ 2,2 տոկոս աճ՝ օգոստոսին հուլիսի նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-օգոստոսին աճել է 17,1 տոկոսով, իսկ օգոստոսին հուլիսի նկատմամբ աճը կազմել է 0,9 տոկոս: Ամենաբարձր աճն արձանագրվել է հենց այս ճյուղում, ընդ որում, չնայած ոչ սեզոնային ժամանակահատվածին, ապա՝ արդյունաբերությունում:

Շինարարությունում տարվա առաջին 8 ամիսներին գրանցվել է անկում՝ 2,4 տոկոսով, բայց օգոստոսին հուլիսի նկատմամբ արձանագրվել է 4,7 տոկոս աճ: Մեկ անգամ եւս նշենք, որ սա առավելապես պետական ծրագրերով իրականացվող շինարարության՝ ճանապարհաշինության, աղետի գոտու կառուցման շնորհիվ է, իսկ մասնավոր շինարարությունը դեռ հեռու է նախաճգնաժամային ակտիվությունից: Գյուղատնտեսությունում անկումը փոքր-ինչ նվազել է եւ կազմել 18 տոկոս, իսկ օգոստոսին հուլիսի նկատմամբ արձանագրվել է 7,3 տոկոս աճ:

Ծառայությունների ոլորտում այս տարվա հունվար-օգոստոսին արձանագրվել է 7,2 տոկոս աճ, իսկ օգոստոսին հուլիսի նկատմամբ՝ 3,4 տոկոս անկում: Մանրածախ առեւտրում արձանագրվել է փոքր՝ 0,3 տոկոս աճ, իսկ օգոստոսին հուլիսի նկատմամբ՝ 14,4 տոկոս աճ:

Առեւտրում հունվար-օգոստոսին արձանագրված աննշան աճի ցուցանիշն առնվազն տարակուսանք է հարուցում, քանի որ հակառակ ճգնաժամին, 2009-ին այստեղ նկատելի աճ էր արձանագրվում: Դա պայմանավորված էր ՀԴՄ-ների կտրոնների դիմաց բոնուսներ տրամադրելու կառավարության քաղաքականությամբ, ինչը բացահայտում էր ստվերային շրջանառությունը: Մինչդեռ այս տարի այդ բոնուսների չափն իջեցվեց մինչեւ 1 տոկոսի, ինչն ուղղակի հիասթափություն առաջացրեց սպառողների մեջ եւ էապես նվազեցրեց կտրոն պահանջելու նրանց ակտիվությունը: ՀԴՄ կտրոն չտրամադրելու համար մի քանի օր կասեցված առեւտրի օբյեկտները բացվելուց հետո էլ շարունակում են այն չտրամադրել: Անգամ հանրահայտ սուպերմարկետներում են սկսել մերթընդմերթ «մոռանալ» կտրոն տրամադրելը:

Պետական միջին աշխատավարձերի աճի ցուցանիշը կազմել է 4,7 տոկոս՝ հասնելով 85,3 հազար դրամի, ոչ պետական հատվածում միջին աշխատավարձն ավելացել է 9 տոկոսով եւ կազմել 132,54 հազար դրամ:

Արտաքին առեւտրաշրջանառությունը հունվար-օգոստոս ամիսներին ավելացել է 25,3 տոկոսով եւ կազմել 2 մլրդ 958 մլն դոլար: Արտահանումը կազմել է 598 մլն դոլար՝ արձանագրելով 43,8 տոկոս աճ եւ օգոստոսին հուլիսի նկատմամբ՝ 22,4 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 2 մլրդ 360 մլն դոլար՝ աճելով 21,3 տոկոսով, իսկ օգոստոսին հուլիսի համեմատ՝ 2,4 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը շարունակել է խորանալ՝ կազմելով գրեթե 2,5 մլրդ դոլար:

Գնաճը հուլիսին հունիսի նկատմամբ աճել է 0,3 տոկոսով եւ հունվար-օգոստոսին կազմել 7,7 տոկոս:

Այսպիսով, հուլիսին արձանագրված կտրուկ անկումից հետո, օգոստոսին Հայաստանի տնտեսական ցուցանիշները սկսեցին շտկվել: Ամենայն հավանականությամբ, սեպտեմբերից դրանք ավելի կբարելավվեն, քանի որ տարվա վերջին 3-4 ամիսները ավանդաբար տնտեսապես ամենաակտիվն են:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ադրբեջանը շարունակում է...

*1-ին էջից*

Մեկ այլ տեսանկյունից Նալբանդյանն արդեն անդրադարձել է ԼՂՀ ժողովրդի խնդիրներին: «Մինչ մենք խոսում ենք Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման գործում արձանագրված առաջընթացից եւ կիսում մեր մտահոգությունները դեռեւս չիրականացված նպատակների շուրջը, կան ժողովուրդներ, որոնք միջազգային հանրության ուշադրությունից դուրս են մնացել: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ձեռնարկում է առավելագույնն իր տարածքում ավելի բարենպաստ կյանքի պայմաններ ստեղծելու եւ մարդու իրավունքների պաշտպանությունը ապահովելու համար: Եվ նա դա անում է առանց միջազգային հանրության աջակցության»:

Լեռնային Ղարաբաղը, ըստ նախարարի, շարունակում է ակնկալել համապատասխան օժանդակության ծրագրեր: «Քանի դեռ անգործության հետեւանքով չի հաջողվում վերացնել անմեղ մարդկանց պատճառած վնասները, մենք չենք կարող արձանագրել, որ Հազարամյակի զարգացման բոլոր նպատակները իրականացվել են եւ համաշխարհային մակարդակով ապահովվել են հավասարություն եւ արդարություն», եզրափակել է Նալբանդյանը:

Նյու Յորք այցելության ընթացքում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ կունենա ՄԱԿ-ի ղեկավարության, ինչպես նաեւ տարբեր երկրների իր գործընկերների եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ:

Սեպտեմբերի 25-ի երեկոյան Էդվարդ Նալբանդյանը ելույթ կունենա ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում: Սեպտեմբերի 26-ին Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը կմեկնի Բոստոն, ուր հանդիպում կունենա հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հաջորդ օրը նախատեսված է Հայաստանի արտգործնախարարի ելույթը Թաֆթս համալսարանի Ֆլետչերի իրավունքի եւ դիվանագիտության դպրոցում:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԼՂ հարցով քննարկում Ժնեւում՝ նաեւ Ֆասիեի զեկույցով

**Սեպտեմբերի 17-18-ը Շվեյցարիայի արտաքին քաղաքական գերատեսչության եւ Ժնեւի բարձրագույն որակավորման ինստիտուտի հրավերով Ժնեւում էր Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանը՝ «ԵԱՀԿ գագաթաժողովի նախապատրաստմանն ուղղված Եվրոպական անվտանգության երկխոսություն» անվտանգության սպառնալիքների հանդեպ ԵԱՀԿ կարողությունների ամրապնդում թեմայով համաժողովին մասնակցելու նպատակով:**

**Համաժողովին, ըստ պաշտոնական հաղորդագրության, մասնակցել են Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերին դե Բրիշամբոն, Շվեյցարիայի, Ռուսաստանի, Մոլդովայի, Լեհաստանի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ, ԵԱՀԿ-ում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Լիտվայի, Հունգարիայի դեսպանները, եվրոպական հեղինակավոր գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:**

**Համաժողովի ընթացքում առանձին նիստ է գումարվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առնչությամբ, որի ընթացքում զեկույցներով հանդես են եկել Հայաստանի փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանը, Մինսկի խմբի համանախագահ Բեռնար Ֆասիեն, ինչպես նաեւ Շվեյցարիայի արտաքին քաղաքական գերատեսչության առաջին քաղաքական վարչության պետ Քրիստիան Մովլին:**

**Ծավալված քննարկումներին ներկայացվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ կարգավորման ընթացքը, բանակցային գործընթացի ներկա դժվարությունները ու հեռանկարները: Քննարկման մասնակիցները կարեւորել են Մինսկի խմբի համանախագահների գործունեությունը եւ երկարամյա համատեղ աշխատանքի արդյունքում ձեռք բերված փորձառությունը՝ որպես հակամարտության կարգավորման բացառիկ գրավական:**

Ա. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Մուսա լեռան հերոսամարտը մեր պատմության փառավոր էջերից է




1915 թիվը հայ ժողովրդի համար եղել է ոչ միայն ողբերգական տարի, այլեւ հերոսամարտերի ու ազգային ինքնապաշտպանական մարտերի տարի: «1915 թվին Մուսա լեռում հերոսական մարտեր ենք ունեցել», ասաց ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր **Էդիկ Մինասյանը**: Ամեն տարի Հայաստանում Մուսա լեռան հերոսամարտին նվիրված միջոցառումներ են կազմակերպվում: Այս տարի դրանց մեկնարկը եղավ սեպտեմբերի 15-ին՝ «Նարեկացի» արվեստի միությունում, որտեղ բացվեց նկարների ցուցահանդես՝ նվիրված Մուսա լեռան հերոսամարտի 95-ամյակին: Տոնակատարությունները շարունակվել են մինչեւ անսի 19: Մուսա լեռը՝ ներկայիս Սամանդաղը, գտնվում է Միջերկրական ծովի ափին՝ Սիրիային սահմանակից շրջանում: Լեռան հարավային փեշերին գտնվող 6 գյուղերից այսօր միայն Վաքըֆ գյուղն է հայաբնակ: Հերոսական պայքարի շնորհիվ 1915-ին մուսալեռցիները կարողացել են բազմաթիվ հայերի կյանք փրկել թուրքական յաթաղանից:

«Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի հերոսական պայքարի փառահեղ էջերից է», երեկ «Արմաս» ակումբում նշեց Էդիկ Մինասյանը: Նրա խոսքով՝ այս հերոսամարտը հայերիս համար նաեւ դաստիարակող, ուսուցանող նշանակություն ունի: «Գյուղերի հիմնական բնակիչները ՝ շուրջ 4200 հոգի, իսկ որոշ տվյալներով՝ 4500 հոգի, բարձրացել են Մուսա լեռ ու դիմել ինքնապաշտպանության: Մարտիկների հետ պայքարել են նաեւ ծերերը, կանայք ու պատանիները: Էդիկ Մինասյանը պատմեց, որ թուրքերը, չկարողանալով ընկճել մուսալեռցիների դիմադրությունը, որոշել են պաշարել լեռն ու սովամահ անել հայերին: Պաշարումից հետո մուսալեռցիների դրությունն իսկապես վատացել է, գրեթե սպառվել են պարենն ու ռազմամթերքը: Փրկության միակ ուղին մնացել է Միջերկրական ծովի ափը: Սեպտեմբերի 13-15-ը վերջապես ֆրանսիական 5 ռազմանավեր շուրջ 4058 մուսալեռցիների փոխադրել են Պորտ-Սաիդ (Եգիպտոս):

Հերոսամարտի օրերին մուսալեռցիները զինվորական խորհուրդ են կազմել, իսկ առավել քաջարիներից կազմվել է 3 զինվորական տասնյակ, որոնց հրամանատարներն են եղել Եսայի Յաղուբյանը, Պետրոս Տմլաքյանն (երկուսն էլ ռամկավար) ու Պետրոս Թութագլյանը:

Օրերս մուսալեռցիներն այցելել են Եսայի Յաղուբյանի գերեզմանին, հարգանքի տուրք մատուցել նրան: «**Ազգի**» հարցին, թե հասարակության մեջ ինչքանո՞վ է հայտնի Եսայի Յաղուբյանը եւ միությունն արդյոք ճանաչո՞ւմ է նրա ժառանգներին, Մուսալեռ» հայրենակցական միության նախագահ **Պերճ Ղազարյանը** պատասխանեց. «Եսայի Յաղուբյանն ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչներից է եղել: Նրա ընտանիքն ապրում է Հայաստանում: Ընտանիքի հետ մենք կապ պահպանում ենք»: Է. Մինասյանն էլ ավելացրեց, որ Եսայի Յաղուբյանը համեստ անձնավորություն է եղել, բայց եւ՝ հզոր անհատականություն:

Պերճ Ղազարյանը նաեւ պատմեց, որ Մուսա լեռան վրա մարդիկ օրերով հարիսա են կերել, որպեսզի չմահանան սովից: 1919-ին պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո մուսալեռցիները վերադարձել են իրենց գյուղերը: «Վերադառնալով իրենց տները՝դեռ 1919 թվից մուսալեռցիներն ամեն տարի հարիսա են եփել ու նշել հերոսամարտի տարելիցը», հավելեց Պ. Ղազարյանը: Ավանդույթը շարունակվում է նաեւ այսօր՝ արդեն Հայաստանում. մուսալեռցիների զավակներն ամեն տարի հարիսա են եփում ու բաժանում ժողովրդին: Այս տարի հարիսայի արարողությունը կատարվեց Մուսա լեռան հուշարձանի մոտ: «Հարիսան այս տարի 95 կաթսաներով է պատրաստվել: Մինչ 100-ամյակը 100 կաթսայով կպատրաստենք», ավելացրեց Պ. Ղազարյանը:

1946-47 թթ Մուսա լեռան հայության մի ստվար զանգված՝ ավելի քան 5000 հոգի, տեղափոխվել ու բնակություն է հաստատել Հայաստանում: Պերճ Ղազարյանը տեղեկացրեց, որ միությունը 2004 թվականին մուսալեռցիների մարդահամար է անցկացրել: Ըստ մարդահամարի տվյալների՝ ամբողջ աշխարհում մուսալեռցիների ընդհանուր թիվը կազմել է 15 հազար, որից 7 հազարն ապրում են Հայաստանում: Արմավիրի մարզի Գինեվետ ավանը 1972 թվին վերանվանվել է Մուսալեռ, իսկ 1976-ին ավանի մոտ՝ բարձր բլրի վրա կառուցվել է Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշակոթողը: Պերճ Ղազարյանը նշեց, որ այս տարի հայաստանյան տոնակատարություններին մասնակցել են նաեւ Թուրքիայում գտնվող Վաքըֆ գյուղի բնակիչները: «Վաքըֆը հայկական գյուղ է, մոտավորապես 150 բնակիչ ունի՝ 20-30 տուն: Գյուղի երիտասարդության մեծ մասը տեղափոխվել է Ստամբուլ», տեղեկացրեց «Մուսալեռ» միության քարտուղար **Վարդգես Մարտիրյանը**: 2000 թվին Ստամբուլում «Վաքըֆ» հայրենակցական միություն է ստեղծվել, որի 10-ամյակը նշվել է Հայաստանում:

«Մուսալեռ» միության երիտասարդական թեւի վարչության անդամ **Հովհաննես Բալաբանյանն** էլ խոսեց միության երիտասարդների գործունեության մասին. « Մեր անելիքների հիմնական նպատակն է օգնել ավագ սերնդին»: «**Ազգի**» դիտարկմանը՝ իսկ ավագ սերնդի անելիքներն ինչքանո՞վ են օգնում միության երիտասարդներին, **Պ. Սեդրակյանը** նշեց. «Հիմա մեզ փոխարինողներ ենք պատրաստում: Ես էլ, երբ սկսեցի զբաղվել միության գործունեությամբ, 24 կամ 25 տարեկան էի»:

Ասուլիսի վերջում Հովհաննես Բալաբանյանը հավելեց, որ մուսալեռցի շատ երիտասարդներ կան, որ միմյանց չեն ճանաչում. «Չգիտենք՝ որտեղ են նրանք: Լավ կլինի, որ իրար հետ կապ հաստատենք»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Արմենտելը» տուգանվեց սպառողներին մոլորեցնելու համար

**Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երեկ որոշեց անբարեխիղճ մրցակցության համար «Արմենտելի» նկատմամբ կիրառել 500 հազար դրամ տուգանք: Ինչպես տեղեկացանք հանձնաժողովից, որոշումը ընկերության կողմից մատուցվող Hi-Line ծառայության պայմանների նկատմամբ հասարակության մոլորեցման հետեւանք է: Վերոնշյալ ծառայության վերաբերյալ զանգվածային լրատվության (այդ թվում՝ ընկերության ինտերնետային կայքով) եւ արտաքին գովազդի միջոցներով սպառողներին տրամադրվում է տեղեկատվություն, որ Hi-Line ծառայությանը միանալու դեպքում այն կմատուցվի առանց որեւէ վճարի՝ «0 դրամ մոդեմ, 0 դրամ միացում, 0 դրամ առաջին ամիսը»: Սակայն հանձնաժողով դիմած սպառողները բողոքել են, որ թեեւ մոդեմը հասկացվում է անվճար, սակայն որպեսզի այն լիարժեք գործի, անհրաժեշտ է կատարել համակարգչային կարգավորումներ, միացումներ:**

**Հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը նիստի ժամանակ նշել է, որ մոդեմը տրամադրվում է, բայց անհրաժեշտ է կատարել միացումներ, որոնք սպառողները դժվարանում են ինքնուրույն կատարել, իսկ երբ զանգահարում են «Արմենտելի» «100» հեռախոսահամարին, ապա նրանց ուղղորդում են օգտվել համակարգչային միացումներ իրականացնող վճարովի ծառայությունից, որն արժե 3000 դրամ:**

**Հանձնաժողովի աշխատակիցների կատարած ուսումնասիրություններով պարզվել է նաեւ, որ Hi-Line ծառայությունն ակտիվացնելու եւ ծառայության սակագնային տարբերակն ընտրելու մասին դիմում-հայտի մեջ նշված է, որ Hi-Line ծառայության ակտիվացման համար սպառողը պետք է վճարի 4800 դրամ: Ելնելով վերոնշյալից՝ հանձնաժողովը տուգանեց «Արմենտելին»՝ հանձնարարելով ընկերությանը դադարեցնել եւ հետագայում բացառել գովազդի ընթացքում հասարակության մոլորեցմանը հանգեցնող գործողությունները եւ փոխհատուցել անբարեխիղճ մրցակցության հետեւանքով տուժած սպառողների կրած վնասները:**

Ա. Մ.

# «Արմենտելի» հայտարարությունը հանձնաժողովի որոշման կապակցությամբ

**«Արմենտել» ընկերությունը զարմացած եւ մտահոգված է Պետական հանձնաժողովի նմանատիպ որոշմամբ: Նախ եւ առաջ, արդեն որերորդ անգամն է, ինչ առկա է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործառույթների կրկնօրինակման փաստը:**

**Առաջացած խնդրի վերաբերյալ կարող ենք եւս մեկ անգամ կրկնել, որ ինտերնետ ծառայության միացման վարձավճարը, որ գանձվում էր նախքան ակցիան եւ կազմում էր 4800 դրամ, ակցիայի շրջանակում չի գանձվում: Ինչ վերաբերում է համակարգչային կարգավորումներին, ապա բաժանորդը միշտ հնարավորություն է ունեցել ինքնուրույն կարգավորելու համակարգիչը՝ կարդալով պայմանագրի հետ տրվող հրահանգների գրքույկը կամ հետեւել օպերատորի ցուցումներին՝ զանգահարելով հաճախորդների սպասարկման ծառայություն 100 հեռախոսահամարով:**

**Բացի դրանից, Beeline վաճառքի եւ սպասարկման գրասենյակներում տեղադրված ցուցադրական գոտիներում ընկերության աշխատակիցները կարող են գործնականում ցույց տալ, թե ինչպես կարգավորել համակարգիչը: Բայց եթե հաճախորդը, այնուամենայնիվ, չի ցանկանում կամ ժամանակ չունի զբաղվելու համակարգչի կարգավորմամբ, ապա նա կարող է զանգահարել համակարգչային ծառայություններ մատուցող ցանկացած ընկերություն եւ կանչել մասնագետ: Նշենք, որ ոչ մի բաժանորդ չի բողոքել «Արմենտել» ընկերությանն այն բանի համար, որ իրենցից մեկ այլ ընկերություն պահանջել է «հավելյալ վճար» իրենց փոխարեն համակարգիչը կարգավորելու, հակավիրուսային ծրագիր տեղադրելու եւ այլ ծառայություններ մատուցելու համար:**

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԺՈՂՈՎ

## 2011-ը՝ սփյուռքի միջազգայնացման տարի

Ավարտվեց սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ մեկնարկած Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների սփյուռքահայ շրջանավարտների համահայկական հավաքը՝ մասնակցությամբ 12 երկրների շուրջ 80 սփյուռքահայ շրջանավարտի: Հավաքի նպատակն է քննարկել բուհերի սփյուռքահայ շրջանավարտների դերը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման գործում եւ ստեղծել սփյուռքահայ շրջանավարտների համահայկական ընկերակցություն, վեր հանել Հայաստանում սովորող սփյուռքահայ ուսանողների սոցիալական, իրավական հիմնախնդիրներն ու առաջարկել դրանց լուծման մեխանիզմներ:

Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանի** փոխանցմամբ՝ Սփյուռքի առջեւ ծառացած են լուրջ մարտահրավերներ, որոնցից ամենացավալին լեզվի իմացության կորուստն է, դպրոցների փակումն ու աշակերտների թվի նվազում: Նրա հավաստիացմամբ՝ մշակվել է քաղաքականություն, եւ խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Այդ կապակցությամբ 2011թ. նախարարությունը հայտարարելու է սփյուռքի միջազգայնացման տարի: «Ոչ միայն հայկական սփյուռքը, այլեւ սփյուռքը որպես հասկացություն, պետք է սահմանվի միջազգային կառույցների կողմից: Պետք է սահմանվեն սփյուռքի իրավունքները, պարտականությունները, նրա կապը հայրենիքի հետ: Այդ պատճառով նախատեսում ենք 2011թ. գումարել համաժողով, որտեղ կհրավիրենք խոշոր սփյուռք ունեցող երկրների պետական պաշտոնյաներին», ասաց Հակոբյանը:

Համաժողովի ավարտին մասնակիցները կդիմեն ՄԱԿ սփյուռքի մասին կոնվենցիա ստեղծելու առաջարկությամբ:

Հ. Հ.

## Լրագրողների համահայկական համաժողով Արցախում

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության եւ Հայաստանի Ժուռնալիստների միության մասնակցությամբ 2010 թ. հոկտեմբերի 12-16-ը Արցախում կազմակերպվելու է «21-րդ դարի մարտահրավերները. տեղեկատվական անվտանգությունը եւ հայ լրատվությունը» թեմայով լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը, որին մասնակցելու են Հայաստանի եւ Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչներ, օտար ԶԼՄ-ում աշխատող հայ լրագրողներ եւ լրատվամիջոցների ղեկավարներ:

Մինչեւ սեպտեմբերի 15-ը համաժողովին իրենց մասնակցությունը հաստատել են 100 լրատվամիջոցի ներկայացուցիչ: Մոտ երկու տասնյակ լրատվամիջոցներ ցանկություն են հայտնել համաժողովին մասնակցել ինտերնետ կապի միջոցով:

Այժմ համաժողովի մասնակիցներն ուղարկում են իրենց աշխատանքային կենսագրությունը, զեկույցները, լուսանկար եւ համառոտ տեղեկատվություն իրենց լրատվամիջոցի վերաբերյալ, որոնք անմիջապես տեղադրվում են media-forum.am կայքի 5-րդ համաժողով բաժնում:

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Արցախի 6 հյուրանոցի հետ համաժողովի մասնակիցներին տեղավորելու համար: Նախապատրաստական մյուս աշխատանքները եւս ընթացքի մեջ են:

ԱԶԳ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# 1400 դպրոց եւ մոտ 400 հազար աշակերտ ներգրավված են «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի փառատոնում

***«Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական փառատոնը մեկնարկել է: Այդ առնչությամբ «Ազգի» զրուցակիցն է նախագծի ղեկավար, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահի, Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի տնօրեն Վլադիմիր Աղայանը:***



**- Պրն Աղայան, ինչպե՞ս ծնվեց ռուսական երգի փառատոն անցկացնելու նախաձեռնությունը: Ի՞նչ նպատակ է հետապնդում նման փառատոնը, հատկապես որ անց է կացվում Հայաստանի դպրոցների, այսինքն՝ աշակերտական շրջանակի մասնակցությամբ:**

- Վերջին երկու տասնամյակում մեր երիտասարդությունը նահանջել է ռուսական մշակույթից, լեզվից: Ընդ որում, դա չի վերաբերում միայն Հայաստանին, այլ նաեւ ԱՊՀ մյուս երկրներին: Ռուսաստանի հայերի միությունը՝ որպես համառուսաստանյան կազմակերպություն, գտնում է, որ մեր ժողովրդի եւ մեր մշակույթի համար կարեւոր նշանակություն ունեն ռուսական մշակույթն ու լեզուն, ու ռուսերենի եւ ռուսական մշակույթի վարկի պահպանումը մեզանում բխում է հենց մեր շահերից:

Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունների առկայությունը, ռազմավարական գործընկերային հարաբերությունները, նաեւ, որոշ գնահատականների համաձայն, Ռուսաստանում ապրող եւ աշխատող մեր 2,5 մլն հայրենակիցների առկայությունը, իրենց հերթին, կարեւորում են ռուսերենի իմացության, ռուսաց լեզվի տարածման նշանակությունը: Այդ ամենը պայմանավորում է, որ ռուսաց լեզուն եւ մշակույթը դուրս չգան մեր կյանքից, իհարկե՝ երբեք ոչ ի հաշիվ հայոց լեզվի եւ մշակույթի: Հայերենն ու մեր ժողովրդի ժառանգությունն առաջնային են, ինչը ՌՀՄ գործունեության մեջ եւս առանցքային տեղ է զբաղեցնում: Արդեն 6 անգամ Ռուսաստանի հայերի միությունը Հայաստանում «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ստեղծագործությունների մրցույթներ է անցկացնում, որոնք մեկնարկել են առաջին անգամ 2005-ին՝ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի առնչությամբ:

Իսկ փառատոնի նպատակն է Հայաստանի դպրոցականներին առավել ակտիվորեն հաղորդակից դարձնել ռուս ժողովրդի մշակութային եւ հոգեւոր արժեքներին, նպաստել Ռուսաստանի, ռուսական մշակույթի եւ ռուսաց լեզվի նկատմամբ նրանց հետաքրքրության բարձրացմանը եւ դրանով իսկ աջակցել Հայաստանում ռուսական մշակույթի եւ ռուսաց լեզվի վարկի բարձրացմանը, Ռուսաստանի՝ որպես Հայաստանի ռազմավարական գործընկերոջ նկատմամբ ստեղծված բարենպաստ հասարակական կարծիքի պահպանմանն ու հետագա խորացմանը:

**- Ովքե՞ր են միջոցառման կազմակերպիչները, եւ ի՞նչ միջոցներով է իրականացվելու: Այս հարցը կարեւորվում է այն հանգամանքով, որ փառատոնն իսկապես մեծամասշտաբ մի միջոցառում է լինելու, որին մասնակցության ներուժ ունեն 400 հզ.-ից ավելի աշակերտներ Հայաստանի մոտ 1400 դպրոցներից:**

- Միջոցառման կազմակերպիչն է «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որը ստեղծվել է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ եւ բավականին մեծ փորձ է կուտակել հենց այն նպատակների իրականացման համար, ինչպիսին փառատոնի նախաձեռնությունն է: Նախկինում Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնը միջազգային մրցույթներ է իրականացրել, այդ թվում՝ Մոսկվայի Ռուսաց լեզվի զարգացման կենտրոնի եւ Պուշկինի ինստիտուտի հետ: Այդ մրցույթներում հաղթած երկու տասնյակ երեխաներ անվճար կրթության հնարավորություն են ստացել Ռուսաստանի առաջատար բուհերում:

Ռուսական երգի այս փառատոնը նախաձեռնողը Ռուսաստանի հայերի միությունն է՝ Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի իրականացմամբ, այդ կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանը, որն էլ միջոցառման հիմնական ֆինանսավորողն է: Ծրագրի նախագիծը քննարկվել է «Русский мир» հիմնադրամի (Ռուսաստանի Դաշնություն) կողմից, որը մասնակի ֆինանսավորում է տրամադրել այս փառատոնի անցկացման համար: Միեւնույն ժամանակ, առանց Հայաստանի կրթության եւ գիտության, նաեւ մշակույթի նախարարությունների աջակցության նախաձեռնությունն իրականություն չէր դառնա: Միջոցառման աջակիցների թվում են նաեւ Երեւանի քաղաքապետարանը, Հայաստանի Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը, հանրապետության մարզպետարանները: Փառատոնը նվիրված է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին եւ Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին:

**- Ինչպե՞ս են մարզերի դպրոցներն ու մարզպետարաններն ընդհանրապես արձագանքում այս նախաձեռնությանը, որքանո՞վ ոգեւորիչ է նման փառատոնի անցկացումը տեղերում:**

- Անկեղծ ասած, չգիտեմ՝ ինչպիսին կլինի փառատոնի հետագա ընթացքը, բայց մարզպետարանների վերաբերմունքը գերազանցել է մեր ակնկալիքները: Այդ դրական վերաբերմունքն անցել է տեղերում մասնակիցներին, եւ հույս ունեմ, որ նման տրամադրվածությամբ էլ կավարտենք նախագիծը: Ռուսական երգի փառատոն անցկացնելու գաղափարին ու դրանում մասնակցություն ունենալու հարցում վերաբերմունքը հուսադրող է եւ ուրախալի, որ նման մոտեցում է պահպանվել մեր մարզերի եւ մայրաքաղաքի դպրոցներում:

**- Ի՞նչ փուլերից է բաղկացած փառատոնը եւ ի՞նչ կարող են ակնկալել հաղթողները:**

- Փառատոնն անցկացվում է չորս փուլով՝ նախապատրաստական փուլ, առաջին փուլ, երկրորդ փուլ եւ եզրափակիչ փուլ: Նախապատրաստական փուլն արդեն ավարտվել է, որի ընթացքում ձեւավորվել է փառատոնի կազմկոմիտեն, մշակվել են փառատոնի կանոնակարգը, երաշխավորվող երգերի ցանկը: Առաջին փուլը (սեպտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի 10) անցկացվում է հանրապետության դպրոցներում: Դպրոցական փուլի շրջանակներում նախատեսվում է դպրոցներում անցկացնել ռուսական մշակույթի եւ ռուսաց լեզվի օրեր: Երկրորդ փուլը (հոկտեմբերի 11-ից մինչեւ նոյեմբերի 10) անցկացվում է հանրապետության մարզերի, Երեւան քաղաքի մասշտաբով: Երկրորդ փուլը կանցկացվի մարզկենտրոններում եւ Երեւան քաղաքում՝ դպրոցական փուլում հաղթած թիմերի մասնակցությամբ: Այս փուլում կընտրվեն եզրափակիչ (հանրապետական) փուլի մասնակիցները՝ յուրաքանչյուր մարզից առավելագույնը 5 հոգի (յուրաքանչյուր ժանրից մեկական հաղթող): Նախապատրաստական աշխատանքները, հանրապետական մրցույթը եւ եզրափակիչ համերգը տեղի կունենան նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 30-ը:

Եզրափակիչ փուլում հաղթողներին արժեքավոր նվերներ են սպասվում, իսկ մինչ այդ ժամանակահատվածն ընկած փուլի հաղթողներին՝ պատվոգրեր: Փառատոնի հաջող ավարտը, որին չեմ կասկածում, հնարավորություն կարող է ստեղծել, որ այդ փառատոնը եւս դառնա ավանդական, իսկ հետագայում՝ նաեւ միջազգային:

**- Ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերել այս նախաձեռնության առնչությամբ Ռուսաստանի դեսպանությունը Հայաստանում եւ ՌԴ «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության Հայաստանում գործող մասնաճյուղը:**

- Ե՛վ դեսպանատունը, ե՛ւ դաշնային գործակալությունը լավ են ընդունել նախագծի կազմակերպումը: Անգամ դաշնային գործակալության ներկայացուցիչ Վիկտոր Կրիվոպուսկովն անձամբ նամակ էր գրել փառատոնի նախագծի առնչությամբ, նշելով, որ այդ ծրագիրը կարեւոր նախագիծ է ռուսաց լեզվի եւ մշակույթի դիրքը Հայաստանում պահպանելու գործում: Նամակում ուրախություն էր հայտնվում, որ Ռուսաստանի հայերի միությունը նպաստում է ռուսաց լեզվի եւ մշակույթի զարգացմանն ու տարածմանը Հայաստանում: Կարծում եմ, սա լուրջ վերաբերմունքի նշան է, եւ մենք նախատեսում ենք մեր միջոցառումներին հրավիրել ինչպես դեսպանատան, այնպես էլ դաշնային գործակալության ներկայացուցիչներին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ

# Հայ որբերի գործած գորգի ոդիսականը

Սպիտակ տան պահեստասենյակներից մեկում պահվում է մի գորգ, որը պատմական նշանակություն ունի այն առումով, որ 400 հայ որբուհիներ են գործել Բեյրութից 40 մղոն դեպի հյուսիս գտնվող «Ղազիր» ավանում 1924-25 թվերին, տեղեկացնում է **Թոմ Վարդապետյանը** «Արմինյըն միրըր սփեքթեյթըր» շաբաթաթերթի էջերում:

Գունավոր զարդանախշերով 6x4 մետր չափերով այս գորգը ճակատագրի բերումով «որբ» էլ մնացել է այն օրից, երբ առ ի երախտագիտություն ամերիկացի ժողովրդի հայերին ցուցաբերած օժանդակության, Վաշինգտոն է ուղարկվել եւ նախագահ Քելվին Քուլիջին է նվիրվել 1925-ի դեկտեմբերի 2-ին կազմակերպված հատուկ արարողության ժամանակ:

Հայ պատմաբաններն ու արխիվի աշխատակիցներն, ըստ հաղորդագրության, այժմ ելքեր են որոնում այդ մոռացված, բայց արժեքավոր գորգը մշտական ցուցադրության դնելու Սպիտակ տանը, Ցեղասպանության թանգարանում կամ էլ Սմիթսոնյան պատկերասրահում: Բայց քաղաքական որոշ հանգամանքներ խոչընդոտում են այս նախաձեռնությանը: «Եթե գորգի պատմությունը բացահայտվի, խոսք է բացվելու հայերի ցեղասպանության մասին, իսկ այս երկիրը (ԱՄՆ-ը) դեռ չի որդեգրել նման քաղաքականություն», նշում է Վուստերից պատմաբան եւ ատամնաբույժ դոկտ. **Մարտին Դեռանյանը**, որը նպատակ ունի առավել մեծ ուշադրության արժանացնել «Նիըր իսթ Ռիլիֆի» աշխատանքները 1915-1923 թվերին: Նա խորին հարգանքով է արտահայտվում դոկտ. Յակոբ Քունզլերի (կամ «պապա» Քունզլերի) մասին, որը հազարավոր հայերի էր փրկել այդ տարիներին նրանց Սիրիա տեղափոխելով եւ աշխատանքի տեղավորելով Ղազիրում իր իսկ հիմնած գորգի գործարանում (այդ թվերին Լիբանանը առանձին երկիր չէր եւ մտնում էր «Մեծ Սիրիա» տարածքում՝ ֆրանսիական մանդատի ներքո- ծ.խ.): Նախագահ Քուլիջը շնորհակալական եւ սրտաբուխ խոսքերով է ընդունել նվերը: «Ստացել ենք այս գեղեցիկ գորգը, որը Լիբանանում երեխաները հյուսել են առ ի երախտագիտություն այն օգնության, որ Միացյալ Նահանգները ցուցաբերում է նրանց «Նիըր իսթ Ռիլիֆ» կազմակերպության միջոցով: Անձամբ իմ եւ մեր ժողովրդի շնորհակալական խոսքերը խնդրում եմ փոխանցեք այդ որբերին եւ նշեք, որ գորգը իր պատվավոր տեղն է զբաղեցնելու Սպիտակ տանը, որտեղ խորհրդանշելու է բարյացակամ վերաբերմունքի գաղափարը», գրել է նա «Նիըր իսթ Ռիլիֆ» կազմակերպության փոխնախագահ դոկտ. Ջոն Ֆինլիին ուղղված նամակում:

Այդ թվերին Մ. Նահանգներում գործում էր այսպես կոչված «ոսկյա կանոնը», որի համաձայն ամեն տարի դեկտեմբերի առաջին կիրակի օրը մարդիկ պետք է մեկ անգամ ճաշեին, իսկ մնացյալ ճաշերին հասկացվելիք գումարը փոխանցեին «Նիըր իսթ Ռիլիֆ» կազմակերպությանը: Այս նախաձեռնության շնորհիվ տարեկան երկու միլիոն դոլար էր հանգանակվել, որը գորգը նախագահին հանձնելու արարողության թերթերի լուսաբանումով կրկնապատկվել էր: Այս հանգամանքն էլ նպաստել էր, որ Ղազիրի գործարանի պատվերները ավելանան, որբ աղջիկներն ավելի շատ գումար վաստակեն եւ ի վերջո կարողանան ընտանիք կազմել: Նախագահ Քուլիջն իր պաշտոնավարության ժամանակ գորգը ցուցադրել էր «Կապույտ սենյակում», որտեղ էլ այն մնացել էր մինչեւ 1928 թվականը, որից հետո նա իր հետ տարել էր Նորթամպտոն (Մասաչուսեթս): Այնտեղ «Բիչիզ» (հաճարենիներ) կոչված վայրում գորգը զարդարել էր իր հյուրասենյակը մինչեւ իր մահը՝ 1933-ին, որից հետո տիկին Քուլիջն էր այն պահպանել մինչեւ իր մահը՝ 1957-ին: Այնուհետեւ գորգը անցել էր Քուլիջների որդուն՝ Ջոնին, որը 1974-ին վաճառել էր իր Կոնեկտիկուտի տունը, եւ գորգը հանգրվանել էր Պլիմութում (Վերմոնտ) գտնվող «Քուլիջների կալվածքում», որտեղից հետագայում վերադարձվել էր Սպիտակ տուն եւ 1983-ին մուտքագրվել թանկարժեք իրերի ցուցակում:

Հավաքածուների կուրատորը 1984-ին հրավիրել էր դոկտ. Մարտին Դեռանյանին՝ ճշտելու որոշ մանրամասներ գորգի վերաբերյալ: Դեռանյանը այցելել էր Սպիտակ տուն Միչիգանից դեմոկրատ սենատոր Կառլ Լեւինի եւ ՄԱԿ-ում նախկին դեսպան Սեթ Մոմջյանի հետ եւ հասկացրել, որ գորգը «պաշտոնական ցուցադրության» չի արժանանա երբեւէ: «Գորգին դիպչելը յուրօրինակ զգացմունքներ առաջացրեց իմ մեջ,- հիշում է Դեռանյանը,- այդ աղջիկները իրենց նուրբ մատներով էին հյուսել այդ երախտագիտություն արտահայտող գորգը: Հիշեցի մորս, որ մինչեւ Ուրֆա հասնելը անցել էր ամեն տեսակի վիրավորանքների ու ստորացումների միջով»:

Ճակատագրի բերումով 1995-ին մեկ ուրիշ հայի է բախտ վիճակվել այցելել Սպիտակ տուն եւ տեսնել այդ գորգը: Հյուսիսային Էնդովերից (Մինեսոտա) Շառլոտ Մովսիսյանը «Լոուրենս իգլ-Տրիբյուն» թերթում մի օր նկատում է մի գունավոր նկար, որտեղ Հիլարի Քլինթոնը հյուրերին ցույց է տալիս (իր ամուսնու նախագահական պաշտոնավարության ժամանակ) «Կապույտ սենյակը»: Նա անմիջապես ճանաչում է այնտեղ ցուցադրված պայծառ գույներով գորգը, որովհետեւ իր մայրը՝ **Վարդուհի** (Հովսեփյան) **Գյուլեզյանը** այն որբուհիների թվում էր եղել, որ հյուսել էին ժամանակին այդ գորգը: Նա (Վարդուհին) այդ ժամանակ 14 տարեկան է եղել: Նրան 1926-ին Ղազիրից 15-ամյա մեկ ուրիշ որբուհու՝ Գյուլենիա Քեհիայանի հետ Ամերիկա են տեղափոխել՝ մասնակցելու Մ. Նահանգների կազմավորման 150-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառումներից ջուլհակագործների շոուին:

Շառլոտ Մովսիսյանը նամակ է գրում Հիլարի Քլինթոնին՝ առանց շատ մեծ ակնկալությունների, եւ ակնարկում գորգի մասին: Մեկ ամիս անց նա Սպիտակ տան կուրատորից հրավեր է ստանում իր ընտանիքի հետ այցելելու Վաշինգտոն:

Իր ամուսնու՝ Ալբերտի, եղբոր՝ Մարտինի եւ մոր հետ Շառլոտը ուղեւորվում է գնացքով դեպի Սպիտակ տուն, որտեղից կուրատորն ու նրա օգնականը նրանց ողջունում են եւ ուղեկցում դեպի «Կապույտ սենյակ», որտեղ տիկին Վարդուհին անմիջապես ճանաչում է գորգը:

«Այն փաստը, որ «Նիըր իսթ Ռիլիֆ» կազմակերպությունը պատրաստվել էր օգնել հայ որբերին, ներառյալ զոքանչիս, արժանի է ամեն գնահատանքի եւ երախտագիտական զգացմունքների: Ես ծնկի եկա եւ սկսեցի մատներով շոշափել գորգի յուրաքանչյուր սանտիմետրը: Գորգի անկյուններից մեկում կարդացի երախտագիտական խոսքերը, որոնք ուղղված էին «ոսկյա կանոնը հաստատողներին», հիշում է տիկին Վարդուհու փեսան՝ **Ալբերտ Մովսիսյանը**:

Նրանք մեկուկես ժամ մնում են Սպիտակ տանը, նկարում գորգը եւ հիշողություններով բեռնված հեռանում:

«Շատ քչերը գիտեն այս գորգի եւ նրա նշանակության մասին, որովհետեւ որբուհիները շատ բան չէին պատմում դրա եւ իրենց անցած տառապալից անցյալի մասին: Մեր այցելություններից հետո գորգը դարձյալ պահեստավորվել է եւ մոռացության մատնվել: Հույս ունենք, որ մի օր իր արժանի ու պատվաբեր տեղը կգտնի», ասում է Ալբերտը, որը դպրոցում իր դասերի ժամանակ գորգի օրինակով երեխաներին պատմում է հայերին պատուհասած ցեղասպանության մասին, նշելով, որ եթե միայն լեզու ունենար այդ գորգը, հատորներ լրացնող պատմություններ կպատմեր:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# Մշակույթ

«Երեւանյան հեռանկարներ» 11-րդ երաժշտական միջազգային փառատոնի աշնանային համերգաշարը բացառիկ սկիզբ է խոստանում. հայ հանդիսականը եզակի հնարավորություն է ունենում Հայաստանում առաջին անգամ ունկնդիրը լինելու Լոնդոնի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգային ներկայության` Արամ Խաչատրյան համերգասրահում եւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Երաժշտական այս նշանավոր փառատոնը անցած տասը տարիների րախաղերի այս օրերին: Նվագախումբն ունի բազմաթիվ ձայնագրություններ ֆիլմերի եւ հեռուստատեսության համար: Իր համերգասրահը Լոնդոնի կենտրոնական վայրում գտնվող Կադոգանն է, նաեւ սեփականատեր է ձայնագրման ստուդիայի եւ բրենդի:

Հիրավի, բարեպաշտություն ու պատիվ է երեւանյան բեմերից այսպիսի մեծահամբավ նվագախմբի ունկնդրել, որի առաջին համերգը` սեպտեմբերի 22-ին մեզ համար կարեւորվում է նաեւ նրանով, որ Գժեգոշ Նովակի փոխարեն համերգը ղեկավարելու է Էդուարդ հրավիրելը հիրավի դժվար է եղել, երկու տարի անդադար աշխատել են ծրագիրն իրականացնելու համար եւ որ երկիրը չէ իրենց բերել, այլ` փառատոնը, որ Եվրոմիության անդամ է: Իսկ նվագախումբը, անկասկած, տեղեկացված է հռչակավոր այլ խմբերի ու մենակատարների` փառատոնային մասնակցության մասին: Ըստ նրա, «Երեւանյան հեռանկարներ»-ի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սեզոնային բնույթ չի կրում, տարեշրջանային է:

Մեր հյուրերի համար Հայաստանն անծանոթ երկիր է եւ հանդիսատեսը` նույնպես: Եվ սա լավ է. նոր վե-

# Երաժշտական հազվադեպ անակնկալ

## Լոնդոնի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի հյուրախաղերը Երեւանում



ընթացքում հայ հանդիսականին հավաստեց բարձրաճաշակ արվեստի իր սկզբունքներն ու գեղագիտական հավատամքը` աշխարհահռչակ նվագախմբերի ու մենակատարների` երեւանյան բացառիկ համերգների կազմակերպմամբ: «Սա մեկ օրվա պատմություն չէ, իհարկե: Փառատոնի հեղինակությունը հասավ մեզ համար անպատկերացնելի չափերի: Տասը տարի առաջ երբեւիցե չէինք կարող երազել այն, ինչ այսօր ունենք իրականում` որ հնարավոր է մի օր Հայաստանում հանդես գա Լոնդոնի Թագավորական նվագախումբը», երեկ մշակույթի նախարարության մամուլի ասուլիսից հետո մեր զրույցում ասաց փառատոնի նախագահ եւ գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր **Ստեփան Ռոստոմյանը**:

Լոնդոնի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախումբը ամենահեղինակավոր խմբերից մեկն է աշխարհում: Նա հին պատմություն ու հարուստ ավանդույթներ ունի` ձեւավորված 1946-ին` Սըր Թոմաս Բեքհեմի հիմնադրմամբ: Հարուստ նվագացանկը` երաժշտարվեստի կատարյալ չափանիշների, բարձր կատարողական վարպետությունը, միջազգային հեղինակություն ունեցող դիրիժորների ղեկավարությունը (Ռուդոլֆ Քեմպ, Անթալ Դորատի, Անդրե Պրեվին, Վլադիմիր Աշկենազի, Պինկաս Ցուկերման, Գժեգոշ Նովակ, Դանիել Գատտի, ներկայիս գեղ. ղեկավար եւ գլխավոր դիրիժոր` Չարլզ Դյութուա), նվագախմբին հիրավի միջազգային մեծ համբավ ու հռչակ են ապահովել. միայն վերջին 5 տարիներին շրջագայել է աշխարհի 30 երկրներում եւ բացի համերգներից նաեւ կրթական ծրագրեր իրականացրել (վարպետության դասընթացներ), աշխատել սոցիալապես խոցելի հասարակական խմբերի` անօթեւանների, ուղղիչ վայրերում գտնվող եւ հիվանդ երեխաների, նաեւ երիտասարդ ակումբների հետ. մի բան, որի ականատեսն ու մասնակիցը կլինեն նաեւ Երեւանի թիվ 13 երաժշտական հատուկ դպրոցի ծնողազուրկ եւ անօթեւան սաները` նվագախմբի երեւանյան հյու-

Թոփչյանը` աշխարհահռչակ դաշնակահար Բորիս Բերեզովսկու մենանվագությամբ եւ երկրորդը եւս, որտեղ արդեն անգլիացի դիրիժորի ղեկավարությամբ նվագախմբի հետ ելույթ կունենան հանրաճանաչ օպերային երգիչներ Հասմիկ Պապյանը եւ Բարսեղ Թումանյանը: (Ծրագրում` առաջին համերգ` Պ. Չայկովսկի, Դմ. Շոստակովիչ, երկրորդ օր` Վերդի, Ռոսսինի, Հալեվի, Գունո, Չայկովսկի):

«Ուրախ եմ, որ հայ դիրիժորը առիթ է ունենում այսպիսի ֆանտաստիկ համերգ ղեկավարել, սա իր ստեղծագործական ճանապարհին թռիչքային հնարավորություն է: Հրաշալի է` մեր արտիստների` աշխարհի մեծ երաժիշտների հետ ելույթ ունենալու այսպիսի առիթը: Սա էր իմ երազանքը` ոչ միայն կազմակերպել փառատոն, այլ ճանապարհ բացել, չափանիշներ դնել Հայաստանում, որովհետեւ այսօր խաբում են ժողովրդին գածր արվեստով: Իսկ հնագույն մշակույթ ունեցող ժողովուրդը իրավունք չունի այսչափ գածրանալու:

Եվ պատկերացնում եք, այլեւս նշանակություն չունի Փարիզում, Լոնդոնում, թե Հայաստանում ես ապրում, որովհետեւ նույն արվեստի հետ ես շփվում: Դա մեծագույն նվաճում է»:

Ստ. Ռոստոմյանը խոստովանում է, որ այսպիսի խումբ Հայաստան

րաբերմունք, նոր ունկնդրում: Իրենք` նվագախմբի անդամները այսպիսի նվագախմբում նվագելը մեծ պատիվ են համարում: Եվս մեկ կարեւորելի հանգամանք` հոգեւոր-ստեղծագործական մոտեցման. Ավետարանի հանդեպ նվագախմբի անդամների հավասի մշակութային ընդհանուր դաշտը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ.** Նման ծրագրերի (եւ առհասարակ որեւէ այլ) իրականացման վերաբերյալ ադրբեջանական եւ այլ զուգահեռ-համեմատություններ չընդունելով հանդերձ, այդուամենայնիվ տեղեկացանք, որ հուլիս-օգոստոս ամիսներին Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախումբը հյուրախաղեր ունեցել է նաեւ Ադրբեջանում: Ինչպես փառատոնի գեղ. ղեկավարն է ասում, այս ծրագիրը ֆինանսապես շատ թանկ է եւ ամեն երկիր չի կարող թույլ տալ այսպիսի հյուրախաղեր կազմակերպել: *«Ադրբեջանը ամեն ինչ անում է, որ փառատոն ունենա: Նրանց նախագահը նույնիսկ Ռոստրոպովիչի այրուն հրավիրեց` փառատոն ստեղծելու: Մարդիկ, որ իրենց կյանքը ապրում են Փարիզում, չեն կարող Բաքվում նստել ու միջավայր ստեղծել: Royal Philharmonic-ին շատ մեծ հոնորարներով հրավիրեցին Ադրբեջան, որտեղ ութ համերգ ունեցավ: Բայց միեւնույն է, փառատոն այդպես էլ չձեւավորվեց»:*

# «Կրիայի քայլերով` հոսանքին ընդառաջ»

**Ամերիկահայ գրող, խմբագիր, մշակութային եւ քաղաքական գործիչ Անդրանիկ Անդրեասյանի կրտսեր եղբայր Ջեկ Անդրեասյանը նույնպես ամերիկահայ համայնքի ականավոր մտավորականներից էր: Ծնվել էր 1920-ին Կոստանդնուպոլսում, ուսում ստացել Մ. Նահանգներում եւ ղեկավար պաշտոններ զբաղեցրել մի շարք ամերիկահայ կազմակերպություններում` ՀԲԸՄ-ում, Հայաստանյայց եկեղեցու թեմում, «Արմինյն միրոր սփեքթեյթր», «Արարատ» պարբերականներում եւ այլն: Հիմնել է «Արարատ» եւ «Աշոտ» հրատարակչատները եւ կարեւոր դեր խաղացել «Անահիտ» գրական մրցանակի հիմնադրման գործում: Ինքն էլ է զբաղվել գրականությամբ, գրել է էսսեներ, բանաստեղծություններ, սատիրա-քննադատական հոդվածներ եւ կատարել թարգմանություններ` հայ գրողներին ծանոթացնելով անգլիալեզու ընթերցողներին: Նրա ոճը կենսունակ է, շիտակ ու մատչելի: Վախճանվել է 2009-ին:**

**Իր հիշատակը հավերժացնելու նպատակով դուստրը` Էլիզ Անդրեասյան-Բայիզյանը, ի մի է բերել նրա գրական գործերը եւ բարեկամների հովանավորությամբ ու «Աշոտ» հրատարակչատան բարյացակամ օժանդակությամբ լույս ընծայել «Կրիայի քայլերով` հոսանքին ընդառաջ» հատորը` 197 էջից բաղկացած, որը ծրագիրն իրականացնողները որոշել են ուղարկել բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են Անդրեասյանի ստեղծագործություններով: Հատորի խորագիրը վերցված է Անդրեասյանի բանաստեղծություններից մեկի տողերից: Գիրքը կարելի է ստանալ` այցելելով elisejane320@aol.com կայքը:**

Հ. Ծ.



# Այդ ծանոթ եւ անծանոթ երգահանը` Դայանա Գյուլխասյան-Ռահբին

**«Ահա կոմպոզիցիոն մի ոճ, որտեղ միաձուլվում են նեոկլասիցիզմն ու նեոռոմանտիզմը` համեմելով այդ միասնությունը նաեւ էթնիկական, տվյալ դեպքում` հայկական համուհոտով»: Այսպես է բնութագրել արվեստագետ-քննադատներից մեկը Դայանա Գյուլխասյան-Ռահբիի երաժշտական ստեղծագործությունները, որոնք բազմազան են ժանրային տեսակետից:**

**Առլինգտոնից (Մասաչուսեթս) «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 7-ի համարում զետեղված հոդվածը, որտեղից թարգմանաբար քաղում ենք մեր տվյալները, տեղեկացնում է, որ Սոմերվիլում (Մասաչուսեթս) ծնված երգահանը Եղեռնից մազապուրծ դեղագործ Փիթեր Ահարոնի Գյուլխասյանի դուստրն է, ով այժմ հիմնականում մասնավոր դասեր է տալիս իր տանը` Բելմոնտում, միաժամանակ դասախոսություններ եւ գործնական դասընթացներ տալով տարբեր հաստատություններում: Նրա ստեղծագործությունները կատարվում են ինչպես Մ. Նահանգներում, այնպես էլ Եվրոպայում: Նրա «Ուրարտու» ռապսոդիան մայիսին կատարվել է Բոստոնի «Ջորդան Հոլում», իսկ «Ինֆինի» եւ «Բաղաթել» ստեղծագործությունները օգոստոսի վերջերին իրենց պրեմիերան են ունեցել Պիժոնի (Ֆրանսիա) «Արվեստի կենտրոնում»: Առաջիկա հոկտեմբերին Նյու Յորքի «Կառնեգի» համերգասրահի «Վեյլ» դահլիճում սոպրանո Քերոլ Կարոլը հանդես է գալու նրա գործերի կատարմամբ, իսկ ամսվա վերջին Լոնդոնի երաժշտության «Գիլդիայի դպրոցում» տեղի է ունենալու Կարոլա Գրինդիի հիշատակին նվիրված, դաշնամուրային չորս ձեռքի համար գրված երաժշտության պրեմիերան:**

**Հակառակ միջազգային դասական երաժշտության աշխարհում ունեցած վաստակին եւ հռչակին` Դայանան հայկական համայնքում այնքան էլ մեծ ճանաչում չունի: Պատճառը նրա չափից ավելի համեստ անձնավորություն լինելն է: Նրա ստեղծագործական նվաճումները հայ հասարակությանը ծանոթացնելու նպատակով «Հայ կանանց միջազգային ասոցիացիան» կազմակերպել է մի համերգ, որը տեղի է ունենալու սեպտեմբերի 26-ին Առլինգտոնի «Հայ մշակութային հաստատության» դահլիճում:**

**Թերթի հոդվածի առիթով տված հարցազրույցում Դայանան խոստովանել է, որ երաժշտության հանդեպ սերը իր մեջ սերմանել է դաշնակահարուհի մայրը` Զաբել Եջյանը: Հետագայում սովորել է նաեւ Նյու Յորքում եւ Զալցբուրգում (Ավստրիա): 1985-ին ընտրվել է Ամերիկայի կին կոմպոզիտորների Մասաչուսեթսի բաժնի նախագահ:**

Հ. Ծ.

# Նամակ խմբագրությանը

**Հարգելի խմբագրություն**

**Միանշանակ կիսում եմ 08.09.2010 թ. «Ազգում» տպագրված, իմ բարեկամ, դիրիժոր Զավեն Վարդանյանի խոհերն ու ապրումները, ճիշտ եւ զուլալ գնահատականը հայ երգի` մեր օրերում արդեն դասական դարձած Ռոբերտ Ամիրխանյանի երգարվեստի առնչությամբ: Նաեւ ինձ թույլ եմ տալիս հիշելու, որ մենք, եւ փառք Աստծո, ունեցել ենք հիասքանչ երգեր նույնպես, որոնց հեղինակները են եղել Աշոտ Սաթյանն ու Արտեմի Այվազյանը, Կոնստանտին Օրբելյանը, Ալեքսանդր Աճեմյանն ու Խաչատուր Ավետիսյանը, եւ ինչու չէ, Արամ Սաթյանն ու Ռուբեն Գալստյանը, Վարդան Աճեմյանը...**

**Այո՛, ունենք երգի հիասքանչ դպրոց, արդյունքում` հրաշալի անզուգական երգեր...**

**Հիրավի հարուստ է հայ երգարվեստը, որի համար անկասկած, շնորհակալ ենք ժողովրդական ակունքներին, Մեծն Կոմիտասին: Եվ նրանց ավանդույթներն են, որ այսօր, ժամանակի հետ համընթաց, նոր շնչով, իսկ հիմքում անպայման ունենալով մեղեդին (խեղճ էսօրվա «աստղեր») շարունակում է ստեղծագործել մեր երգահան Ռոբերտ Ամիրխանյանը: Խոստովանեմ, յուրաքանչյուր տխուր օրերիս, իսկ դրանք, ցավոք, քիչ չեն («տնից տեղից» հեռու զգայուն մարդու հալը ինչ պիտի լինի) քթիս տակ միշտ մռմռում եմ ժողովրդական եւ ամիրխանյանական երգերը, իսկ երբ տանը մարդ չի լինում, վերցնում եմ ձեռքս ակորդեոնը (վատ չեմ նվագում, բայց առանց «կլկլոցների», «ներողություն») եւ գլուխս կախ հանձնվում եմ խոհերին...**

**Ես մեկ անգամ չէ, որ բարձր եմ գնահատել Ռոբերտ Ամիրխանյանի երգարվեստը, պատիվ եմ ունեցել այդ մասին բարձրաձայն ասել նաեւ իմ սիրելի «Ազգ» թերթում, անձամբ իրեն` հեղինակին (հեռախոսով` Իսրայելից) եւ իմ գործընկեր Արամ Սաթյանին ու Լեւոն Չաուշյանին, Էդվարդ Հայրապետյանին ու Մարտին Վարդազարյանին: Ռոբերտ Ամիրխանյանի երգարվեստի մեծության մասին լսել եմ հեռուստատեսությամբ նաեւ Երվանդ Երզնկյանից եւ կրկին հաստատում եմ նրա կարծիքը:**

**Մեկ խնդրանք.**

**Այսօր, կրկնում եմ` այսօր, երբ պատմության գիրկն անցան ժամանակին Ռոբերտ Ամիրխանյանի (եւ ոչ միայն նրա) երգերի անզուգական կատարող մեր հայ երգիչ-երգչուհիները, ի հայտ է եկել «նոր սերունդ»` իր աստղային հիվանդություններով, եւ նրանցից յուրաքանչյուրը կատարում է մաեստրոյի երգերը (եւ ոչ միայն նրա), ով ինչպես ցանկանում կամ ի կարող է: Մի երգեք: Պետք չէ: Թողեք ականջներս մաքուր մնան հին հնչողությամբ:**

**Ռոբերտ Ամիրխանյանի երգերն այսօր միմիայն պիտի երգի... Ռոբերտ Ամիրխանյանը:**

**Արդ ուժ եւ կարողություն քեզ, երգի վարպետ:**

ՆՈՒԲԱՐ ԱՄԼԱՆՅԱՆ

Հայֆա, Իսրայել

**Հ. Գ. Եթե որեւէ մեկին թվաց, թե շատ գովեցի «հատուկ միտումով», ապա... Ասված իրեն հետ... Միայն ասեմ, որ ինձ համար (կրկնում եմ` ինձ համար) Ռ. Ամիրխանյանը «բարդ» անձնավորություն է: Բացառված չէ, որ ես իր համար` կրկնակի... բայց, վերը շարադրածս մտքերն այս լրացուցիչ տողերի հետ կապ չունեն:**

Հրավիրում ենք նկարիչ

ՌԱՖՖԻ ԱԴԱԼՅԱՆԻ

ստեղծագործությունների ցուցահանդեսի բացմանը,
որը կկայանա **սեպտեմբերի 29-ին`**
Ժամանակակից արվեստի թանգարանում
(Մաշտոցի պող. 7), ժ.18-ին:

# Օլիմպիական չեմպիոնները շարունակեցին հաղթարշավը

## Հայ շախմատիստուհիներն առաջին պարտությունը կրեցին

Շախմատի համաշխարհային օլիմպիադայի 2-րդ տուրն էլ հաջող էր օլիմպիական կրկնակի չեմպիոն Հայաստանի տղամարդկանց հավաքականի համար: Այս անգամ մեր թիմը 3,5-0,5 հաշվով պարտության մատնեց մրցաշարի մասնակիցների մեջ 49-րդ վարկանիշն ունեցող Ավստրալիայի շախմատիստներին: Վերջիններս մեկնարկային տուրում 4-0 հաշվով հաղթել էին Բահրեյնի հավաքականին: Նախորդ տուրի համեմատ այս անգամ առաջին խաղատախտակին խաղաց մեր թիմի առաջատար Լեւոն Արոնյանը, որը սպիտակներով արդեն 28-դ քայլին պարտության մատնեց Ժառ Ժոնգ-Յուանին: Առաջինն իր մրցավեճն ավարտած Վլադիմիր Հակոբյանը 22-րդ քայլին հաշտություն կնքեց Դավիթ Սմերդոնի հետ: Հաղթանակներ տոնեցին 3-րդ եւ 4-րդ խաղատախտակներին հանդես եկած Գաբրիել Սարգսյանն ու Արման Փաշիկյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Վենդի Քսիեին եւ Ստեֆեն Սոլոմոնին:



Իսկ ահա Հայաստանի կանանց հավաքականի համար 2-րդ տուրն անհաջող էր: Մեր շախմատիստուհիները 1,5-2,5 հաշվով պարտվեցին 20-րդ վարկանիշն ունեցող Չեխիայի ընտրանուն, որը նախորդ տուրում 4-0 հաշվով պարտության էր մատնել Յորդանանին: Մեր թիմից հաղթանակ տոնեց միայն 1-ին խաղատախտակի վրա հանդես եկող Էլինա Դանիելյանը՝ երկարատեւ պայքարից հետո պարտության մատնելով Եվա Կուլովանային: Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Քրիստինա Նավլիկովայի հետ: Լիլիթ Գալոյանը պարտվեց Օլգա Սիկորովային, իսկ Նելլի Աղինյանը զիջեց Թերեզա Օլսարովային:

Երկու տուրից հետո Հայաստանի տղամարդկանց հավաքականը 4 միավորով առաջատարների շարքում է: Ինչպես նախորդ տուրում, այս անգամ էլ ուկրաինացիները Շոտլանդիայի հավաքականի հետ մրցավեճում հաղթեցին բոլոր չորս պարտիաներում: Ռուսաստանի առաջին հավաքականը 3-1 հաշվով առավելության հասավ սերբերի նկատմամբ: Չինաստանի հավաքականը նույնպիսի հաշվով հաղթեց բրազիլացիներին, որի կազմում 3-րդ խաղատախտակի վրա Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաշտություն կնքեց Բու Քսյանժիի հետ:

Սլովակիայի շախմատիստները 3-1 հաշվով հաղթեցին լիտվացիներին: Կրկին հաղթանակ տոնեց սլովակների առաջատար Սերգեյ Մովսիսյանը՝ պարտության մատնելով Էդուարդաս Ռոզենթալիսին: Վրաց շախմատիստները սինգապուրցիներին հաղթեցին բոլոր 4 պարտիաներում:

Ներկայացնենք եւս մի քանի ուշագրավ արդյունքներ. Ռուսաստան-2-Վենեսուելա՝ 3,5-0,5, Մոնղոլիա-ԱՄՆ՝ 0,5-3,5, Իսրայել-Ինդոնեզիա՝ 2-2, Ալբանիա-Լեհաստան՝ 0-4, Կուբա-Թուրքմենստան՝ 3-1, Ադրբեջան-Վիետնամ՝ 1,5-2,5, Արգենտինա-Հունգարիա՝1,5-2,5, Բոսնիա-Անգլիա՝ 2,5-1,5, Իսպանիա-Ֆիլիպիններ՝ 2,5-1,5:

Կանանց մրցաշարում Ռուսաստանի առաջին հավաքականը 2,5-1,5 հաշվով հաղթեց բոսնիացիներին: Ուկրաինա-Շվեյցարիա, Չինաստան-Նորվեգիա հանդիպումներն ավարտվեցին զույգերում առաջինը նշված թիմերի հաղթանակով (3,5-0,5): ԱՄՆ-ի հավաքականը 3-1 հաշվով հաղթեց էստոնացիներին: Այս անգամ ամերիկացիների կազմում չէր խաղում Տաթեւ Աբրահամյանը:

# Հայ հեծանվորդների հուսադրող արդյունքները

**Սանկտ Պետերբուրգում անցկացված հրապարակային հեծանվավազքի Եվրոպայի առաջնությունում հաջող մրցելույթներ ունեցան հայ հեծանվորդները: Հայաստանի հեծանվային սպորտի հանրապետական մարզադպրոցի տնօրեն եւ երկրի հավաքականի գլխավոր մարզիչ Ալբերտ Սոլոյանի ղեկավարությամբ Եվրոպայի առաջնությունում հանդես եկան 3 հեծանվորդներ:**



**Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Միհեր Մկրտչյանը 100 շրջան խմբակային հեծանվավազքում 26 մասնակիցների մեջ գրավեց 14-րդ տեղը: Նա ավելի հաջող հանդես եկավ 15 կմ մեկ վերջնագծով հեծանվավազքում՝ ցույց տալով 10-րդ արդյունքը 20 մասնակիցների մեջ: Իսկ 3 կմ անհատական մրցավազքում Միհերը զբաղեցրեց 16-րդ տեղը՝ ցույց տալով 3 րոպե 39 վրկ արդյունք: Նա 8 վրկ-ով բարելավեց իր լավագույն ցուցանիշը եւ լրացրեց սպորտի վարպետի նորման:**

**Դավիթ Մկրտչյանն ու Միրան Ավետիսյանը մասնակցեցին մինչեւ 23 տարեկանների մրցումներին: Նրանք առավել հաջող հանդես եկան խմբակային մրցավազք զույգերով մրցաձեւում՝ 19 մասնակիցների մեջ գրավելով 12-րդ տեղը:**

**Դոնեցկում կայացած խճուղային հեծանվավազքի մրցումներում Հայաստանը ներկայացրին 5 հեծանվորդներ: Նրանք 5 փուլով պետք է հաղթահարեին 415 կմ մրցատարածություն: Մեր հեծանվորդներից երկուսը հեծանիվի խափանման պատճառով վերջնագիծ չհասան: Առավել հաջողը Էդուարդ Մաթեւոսյանի ելույթն էր, որը 5-րդ փուլում 105 մասնակիցների մեջ գրավեց 2-րդ տեղը: Իսկ ընդհանուր հաշվարկով նա 6-րդն էր:**

**«Լեռնային արքա» մրցաձեւում Վարդան Դարբինյանը վերջնագիծը հատեց 4-րդը: Նման բարձր արդյունքներ հայ հեծանվորդները վաղուց ցույց չէին տվել:**

**Այսօր Հայաստանում հեծանվային սպորտն աստիճանաբար վերականգնում է նախկին լավագույն ավանդույթները: Դրանում մեծ է հանրապետության ճանաչված մասնագետ Ալբերտ Սոլոյանի ներդրումը: Երկար տարիներ նա աշխատել է աշխարհի տարբեր երկրներում՝ պատրաստելով բարձրակարգ հեծանվորդներ: Կարելի է նրանցից նշել Համաասիական խաղերի չեմպիոն Կադեր Միզբանիին, աշխարհի չեմպիոն, հոնկոնգցի Վոնգ Կամպոնին, Մալայզիայի ներկայացուցիչ, աշխարհի փոխչեմպիոն Ձո Շուա-Նըգնին:**

**Սոլոյանը վերջին տարիներին կրկին բեղմնավոր գործունեություն է ծավալել հայրենիքում: Այսօր Հայաստանում հեծանվասպորտով զբաղվում են շուրջ 300 հոգի: Բացի Երեւանի մարզադպրոցից, մասնաճյուղեր են գործում նաեւ Վանաձորում, Գյումրիում, Աբովյանում եւ Մասիսում: Շնորհիվ Սոլոյանի անձնական կապերի, միայն այս տարի նրա նախկին սաներից մարզադպրոցը որպես նվեր է ստացել 24 հեծանիվ ու պահեստամասեր 79 հազար դոլար ընդհանուր արժեքով:**

## Աբրահամը դժգոհ է մենամարտի հետաձգումից

Ինչպես տեղեկացրել ենք, Կառլ Ֆրոչի վնասվածքի պատճառով հոկտեմբերի 2-ին Մոնակոյում Արթուր Աբրահամի հետ կայանալիք մենամարտը հետաձգվել է: Ըստ նախնական տվյալների, այն տեղի կունենա նոյեմբերի 27-ին կամ դեկտեմբերի 18-ին:

Բնականաբար, Արթուր Աբրահամը դժգոհ է ստեղծված իրավիճակից. «Ոչ ոք չգիտի, թե իրականում ինչ է տեղի ունեցել Կառլ Ֆրոչի հետ: Կցանկանայի, որպեսզի մենամարտը շուտ կայանար: Բռնցքամարտիկի կարիերան շատ կարճ է եւ չպետք է կորցնել ժամանակը: Կցանկանայի 3 ամիսը մեկ ռինգ դուրս գալ: Շատ դժվար է սպասելը»:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

# Արմեն Ղազարյանը հրում վարժության բրոնզե մեդալակիր

**Ծանրամարտի աշխարհի առաջնության տղամարդկանց մրցաշարի մինչեւ 69 կգ քաշային ծանրորդների մրցավեճում հայ մարզաւերների ուշադրության կենտրոնում Հայաստանի հավաքականի նախկին անդամ, ներկայումս Ռուսաստանի թիմում հանդես եկող Արմեն Ղազարյանի ելույթն էր:**



**Աշխարհի չեմպիոն Լյաո Հայ**

**Պոկում վարժությունը նա սկսեց 145 կգ-ից՝ ծանրությունը հաղթահարելով միայն 2-րդ մոտեցմամբ: Վարժությունը նա ավարտեց 148 կգ-ով՝ ցույց տալով 4-րդ արդյունքը 37 մասնակիցների մեջ: Արմենն ավելի հաջող ելույթ ունեցավ հրում վարժությունում: Առաջին մոտեցմամբ նա իրեն ենթարկեց 176 կգ ծանրությունը, ապա չկարողացավ բարձրացնել 180 կգ-ը, սակայն հաջորդ փորձի ժամանակ գլխավերեւում պահեց 181 կգ-անոց ծանրաձողը: Այս արդյունքով նա հրում վարժությունում արժանացավ բրոնզե մեդալի: Նույնպիսի արդյունքի էր հասել նաեւ կորեացի Կիմ Կում Սոկը, որն անձնական քաշով 210 գրամով թեթեւ էր հայ ծանրորդից, ուստի արծաթե մեդալը նրան բաժին հասավ:**

**Արմեն Ղազարյանը երկամարտի 329 կգ (148+181) արդյունքով գրավեց 4-րդ տեղը: Չեմպիոնի տիտղոսը նվաճեց չինացի ծանրորդ Լյաո Հայը՝ 358 կգ (160+198): Նա երկամարտում եւ հրում վարժությունում աշխարհի նոր ռեկորդներ սահմանեց: Չեմպիոնից 21 կգ-ով հետ մնաց ռումինացի Նինել Միկուլեսկուն՝ 337 կգ (157+180): Բրոնզե մեդալը նվաճեց թուրք Մետե Բինայը՝ 335 կգ (160+175):**

## Վլադիկավկազը հավակնորդների թվում է

**Հնարավոր է, որ 2011-ի հունիսին նշանակված Ռուսաստան-Հայաստան ֆուտբոլային հանդիպումն անցկացվի Վլադիկավկազում: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահ Սերգեյ Ֆուրսենկոն: Ըստ նրա, ֆուտբոլի զարգացման նպատակով ՌԴ հավաքականի ընտրական մրցախաղերը հարկավոր է անցկացնել ոչ միայն Մոսկվայում, այլեւ երկրի այլ շրջաններում: Ուստի Վլադիկավկազն ընդգրկվել է այն քաղաքների ցանկում, որոնք հավակնում են Հայաստանի հետ հանդիպման կազմակերպմանը:**

## Դարպասապահը կրակեց լրագրողի վրա

**Հոնդուրասի «Մոտագուա» թիմի դարպասապահ Դոնալդո Մորալեսն այնքան էր բարկացել թերթում իրեն քննադատության ենթարկած լրագրողի վրա, որ մարզման ժամանակ օդամղիչ ատրճանակով կրակել եւ վիրավորել էր նրան: Այդ պահին Սաուլ Կարանսան հարցազրույցի էր հրավիրել թիմի ֆուտբոլիստներից մեկին, որը եւս տուժել էր կրակոցներից: Մորալեսը հետագայում ներողություն է խնդրել նրանցից: Ակումբը խոստացել է պատժել տաքարյուն դարպասապահին:**

## Թմրամոլ մրցավարը ձերբակալվեց

**Էկվադորցի հայտնի ֆուտբոլային մրցավար Բայրոն Մորենոն ձերբակալվել է Նյու Յորքի օդանավակայանում: Նրա մոտ հերոին է հայտնաբերվել:**

**Մորենոն հանրահայտ դարձավ 2002-ի աշխարհի առաջնությունում: 1/8 եզրափակիչի Իտալիա-Հար. Կորեա խաղում նա չհաշվեց իտալացիների խփած գոլը, նաեւ դաշտից հեռացրեց Ֆրանչեսկո Տոտտիին: 2003-ին Էկվադորի ֆուտբոլի ֆեդերացիան որոշ ժամանակով Մորենային հեռացրել էր մրցավարական գործունեությունից: Պատճառն այն էր, որ Էկվադորի առաջնության խաղերից մեկում երկու թիմերն էլ բողոքել էին նրանից: Հետագայում Մորենոն ընդհանրապես զրկվեց խաղեր սպասարկելուց:**

# Շաքիլ Օ'Նիլը մեղադրվում է մանկական պոռնոգրաֆիայի մեջ

**«Բոստոն Սելթիկսի» կենտրոնական Շաքիլ Օ'Նիլի նախկին քարտուղար Շոն Դառլինգը դատական հայց է ներկայացրել բասկետբոլիստի դեմ այն բանի համար, որ իբր վերջինս ստիպել էր իրեն վերացնել բոլոր այն փաստերը, որոնք ապացուցում էին, որ նա զբաղվել է մանկական պոռնոգրաֆիայով ու այլ անօրինական գործողություններով:**

**Ըստ «Բոստոն Հերալդի», Դառլինգը դատական հայց է ներկայացրել, երբ Շաքիլ Օ'Նիլը հրաժարվել է լռության համար նրան վճարել 12 մլն դոլար:**

**Բասկետբոլիստի փաստաբանի համոզմամբ, իր պաշտպանյալի հասցեին արված բոլոր մեղադրանքները Դառլինգի երեւակայության արդյունք են: Իսկ եթե գործն այլ ընթացք ստանա, ապա բասկետբոլիստը ստիպված կլինի պատասխան հայցով դիմել դատարան:**

# «Այաքսը» սառեցրել է Արվելաձեի հաշիվները

**Ամստերդամի «Այաքսի» ղեկավարությունը սառեցրել է Շոթա Արվելաձեի բանկային հաշիվները: Հոլանդական ակումբը գտնում է, որ թիմի նախկին ֆուտբոլիստն ակումբին 300 հազար եվրո է պարտք: Թուրքական «Կայսերիսպոր» թիմի գլխավոր մարզիչ Արվելաձեն հաստատել է այդ փաստը եւ տեղեկացրել, որ ինքը կքննարկի ու կպարզի, թե ինչ պարտքի մասին է խոսքը:**

**Արվելաձեն «Այաքսում» հանդես է եկել 1997-2001-ին՝ 96 խաղում խփելով 55 գնդակ: Մինչ այդ նա խաղում էր «Տրաբզոնսպորում»: «Այաքսի» կազմում նա դարձել է Հոլանդիայի չեմպիոն: Այնուհետեւ Արվելաձեն ելույթները շարունակեց «Գլազգո Ռեյնջերսում»: 4 տարվա ընթացքում նա 2 անգամ նվաճեց Շոտլանդիայի չեմպիոնի տիտղոսը: Հետագայում վրացի ֆուտբոլիստը կարիերան շարունակեց հոլանդական «Ալկմարում» եւ իսպանական «Լեւանտեում», սակայն հաջողության չհասավ:**

**2008-ին ավարտելով ֆուտբոլային կարիերան, Արվելաձեն ընդգրկվեց «Ալկմարի» մարզչական կազմում, որտեղ աշխատեց Լուի վան Գալի, Ռոնալդ Կումանի եւ Դիկ Ադվոկատի հետ:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

## Օրվա հեռանկարով

# «Իդեալ համակարգն» ընդլայնում է աշխարհագրությունը

*Նոր խանութ-սրահ Ավան համայնքում*




Ավան վարչական շրջանի Խուդյակով 214/1 հասցեում բացվեց «Իդեալ համակարգի» նոր խանութ-սրահը, որը Ավանի բնակիչներին հնարավորություն կընձեռի քաղաքակիրթ պայմաններում կատարելու շահավետ եւ մատչելի գնումներ: Երկհարկանի ընդարձակ եւ հարմարավետ նոր խանութ-սրահում գնորդը ընտրության լայն հնարավորություններ ունի՝ ջեռուցման համակարգեր, լոգասենյակային եւ ներքին հարդարման պարագաներ՝ լամինատե հատակներ, ջահեր, դռներ եւ բռնակներ, էլեկտրական ափսեսուարներ, ներկեր, պաստառներ եւ այլն: Տարածաշրջանում շինանյութի խանութ-սրահների ամենամեծ ցանցը հանդիսացող «Իդեալ համակարգը» ներկայացնում է ավելի քան 30.000 ապրանքատեսակ եւ մատուցում է ավելի քան 100 բարձրակարգ ծառայություն:

Հայ սպառողին առաջարկելով բացառիկ շահավետ պայմաններ՝ «Իդեալ համակարգը» հնարավորություն է ընձեռում քայլելու ժամանակին համընթաց եւ օգտվելու շինարարական ոլորտի վերջին ձեռքբերումներից: «Իդեալ համակարգը» իր սպառողներին է ներկայացնում սալիկների նորացված տեսականի, որտեղ տեղ են գտել սալիկների եվրոպական շուկայի բացառիկ եւ նորաձեւության նոր կանոններ թելադրող նմուշները: Այժմ հայ սպառողներին բացառիկ հնարավորություն է ընձեռված ձեռք բերելու իսպանական սալիկների նորաոճ տեսականի՝ 1 քառակուսի մետրը սկսած 3900 դրամից:

Ծառայությունների մատուցման արդի եղանակների ինտեգրման շնորհիվ «Իդեալ համակարգը» իր սպառողներին հնարավորություն է ընձեռում օգտվելու մատուցվող ծառայություններից անմիջապես բնակարաններից կամ աշխատավայրից: Այսպիսով՝ անկախության տոնի կապակցությամբ՝ մինչեւ սեպտեմբերի 30-ը, «Իդեալ համակարգը» հայտարարում է 70% զեղչ միայն idealsystem.am կայքով պատվիրված բոլոր ծառայությունների համար:

«Իմեքս Գրուպ» ընկերության նախագահ **Նորայր Խաչատրյանի** մեկնաբանությամբ՝ նոր սրահի բացմամբ ընկերությունն ավելի է մոտենում հաճախորդներին՝ ավելի բարձրակարգ սպասարկում իրականացնելով օգնում է հասարակությանը տնտեսելու միջոցներն ու ժամանակը եւ առավել մատչելի պայմաններում կատարելու իրենց ընտրությունը:

«Բոլոր համայնքներում պետք է լինեն «Իդեալ համակարգի» խանութ-սրահներ: Նմանատիպ սրահների բացմամբ կարող ենք խրախուսել հասարակությանը, որպեսզի շատ ժամանակ տրամադրեն բնակարանի կահավորմանն ու նրբաճաշակ ընտրություն կատարեն: Ապացուցված է, որ բնակարանի տեսքը նպաստում է նաեւ այնտեղ ապրող մարդկանց տրամադրության բարձրացմանը: Հետեւաբար վերանորոգմամբ բնակիչներն իրենց կյանքը կփոխեն՝ դարձնելով առավել գունեղ, նորաոճ եւ գեղեցիկ», «Իդեալ համակարգի» խանութ-սրահի բացման արարողության ժամանակ ասաց Նորայր Խաչատրյանը:

Գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանը** փաստում է, որ կազմակերպությունը ճգնաժամի պայմաններում չդադարեցրեց իր գործունեությունն ու շարունակեց ընդլայնվել եւ զարգանալ՝ ապացուցելով, որ հավատարիմ է իր գործին եւ ընտրած ճանապարհին:

«Սրահը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Նոր ներդրումներ կատարելով ապացուցում ենք, որ Հայաստանի տնտեսական զարգացումը հնարավոր է ապահովել, եթե հավատանք մեր ուժերին, ռեալ ծրագրեր մշակենք եւ այդ ծրագրերում կատարողականություն դնենք: «Իդեալ համակարգն» այս փաստը հերթական անգամ ապացուցեց՝ ամեն տարի մի քանի նոր սրահի բացմամբ եւ նոր տեխնոլոգիայի ներդրմամբ», եզրափակեց Արսեն Ղազարյանը:

Հ. Հ.

ՀԱՄԱՌՈՏ

# Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը 50 տարեկան է

**Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում այսօր տեղի կունենա հանդիսավոր նիստ՝ նվիրված ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին: Նիստին մասնակցելու են ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Հարավային Կորեայից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից ժամանած գիտնականները: ԳԱԱ ինստիտուտների տնօրենները, բուհերի ռեկտորներն ու գիտական հասարակության այլ ներկայացուցիչները նույնպես մասնակցելու են նիստին: Ինստիտուտի վաստակաշատ աշխատակիցները պարգեւատրվելու են ակադեմիայի պատվոգրերով ու վաստակագրերով: Սեպտեմբերի 24-25-ին Աղվերանում ինստիտուտի 50-ամյակին նվիրված գիտաժողով է լինելու, որի ընթացքում հայ եւ արտասահմանցի գիտնականները հանդես են գալու շուրջ 45 զեկուցումներով:**

**Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը հիմնադրվել է 1960 թվականին Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնի հիման վրա: Ինստիտուտը հիմնադրվել է ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ, ներկայումս ինստիտուտը ղեկավարում է ֆիզմաթ. գիտությունների թեկնածու Արսեն Հախումյանը:**

Ի. Պ.

# Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Զդիսլավ Ռաչինսկուն

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը սեպտեմբերի 22-ին ընդունել է Հայաստանում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկուն:**

**Քննարկվել են Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզեի հրավերով Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության՝ նոյեմբերին Լեհաստան կատարելիք պաշտոնական այցի հետ կապված կազմակերպչական հարցեր: Այցի ընթացքում նախատեսվում է հայ-լեհական երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցերի լայն շրջանակի քննարկում, այդ թվում՝ Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի եւ Լեհաստանի Ազգային անվտանգության բյուրոյի միջեւ համագործակցության հուշագրի եւ 2010-2012 թվականների համագործակցության ծրագրի ստորագրում:**

***Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ***

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակարան: Ընդհանուր մակ. 91.4 քմ: Հասցե: ՀՀ, ք. Երեւան, Բաշինջաղյան 20շ., բն. 25:: Մեկն. գինը՝ 20000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 25.10.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2010 Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ագրոնոմիա, **անասնաբուծություն,** ագրոէկոլոգիա, **բույսերի պաշտպանություն,** անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, **անտառային տնտեսություն եւ բնակավայրերի կանաչապատում,** խմորման արտադրությունների տեխնոլոգիա եւ գինեգործություն, **հացի, հրուշակեղենի եւ մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա,** կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա, **կաշվի եւ մորթու տեխնոլոգիա,** մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա, **պահածոյացման եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա**, գյուղատնտեսական հումքի եւ պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում եւ սերտիֆիկացում, **գյուղատնտեսության մեքենայացում,** գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա եւ ավտոմատացում, **հողաբարելավում, հողային եւ ջրային պաշարների համալիր օգտագործում եւ պահպանում**, հողաշինարարություն եւ հողային կադաստր, **փոխադրումների կազմակերպումն ու կառավարումն ագրոպարենային համակարգում, այդ թվում փոխադրումների եւ ճանապարհային երթեւեկության կազմակերպում եւ կառավարում մասնագիտացմամբ,** ագրոբիզնես եւ շուկայաբանություն, այդ թվում առեւտուր եւ շուկայաբանություն մասնագիտացմամբ, **ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում,** ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում եւ աուդիտ, ագրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում, սննդարդյունաբերության էկոնոմիկա եւ կառավարում, **ապահովագրական գործ,** ագրարային քաղաքականություն եւ տարածաշրջանի զարգացում, հողագույքային հարաբերություններ մասնագիտությունների գծով:

ՀՊԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտում ուսուցումը կատարվում է միայն վճարովի համակարգում:

Դիմորդները ըստ մասնագիտությունների քննություններ են հանձնում հետեւյալ առարկաներից.

ա) Ագրոնոմիա, ագրոէկոլոգիա, բույսերի պաշտպանություն, անասնաբուծություն, անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մրցութային քննություններ՝ մաթեմատիկա կամ կենսաբանություն (գրավոր, հանձնելը պարտադիր է) եւ կենսաբանություն** կամ քիմիա**(գրավոր), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու*(գրավոր):

բ) անտառային տնտեսություն եւ բնակավայրերի կանաչապատում - մրցութային քննություններ՝ մաթեմատիկա կամ ֆիզիկա (գրավոր, հանձնելը պարտադիր է) եւ քիմիա** կամ կենսաբանություն** (գրավոր), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու*(գրավոր):

գ) Խմորման արտադրությունների տեխնոլոգիա եւ գինեգործություն, մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա, պահածոյացման եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա, հացի, հրուշակեղենի եւ մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա, կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա, կաշվի եւ մորթու տեխնոլոգիա, գյուղատնտեսական հումքի եւ պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում եւ սերտիֆիկացում - մրցութային քննություններ՝ մաթեմատիկա (գրավոր, հանձնելը պարտադիր է) եւ քիմիա** կամ ֆիզիկա**(գրավոր), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու*(գրավոր):

դ) Գյուղատնտեսության մեքենայացում, գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա եւ ավտոմատացում, հողաբարելավում, հողային եւ ջրային պաշարների օգտագործում եւ պահպանում, հողաշինարարություն եւ հողային կադաստր, փոխադրումների կազմակերպումն ու կառավարումն ագրոպարենային համակարգում, այդ թվում փոխադրումների եւ ճանապարհային երթեւեկության կազմակերպում եւ կառավարում մասնագիտացմամբ - մրցութային քննություններ՝ մաթեմատիկա (գրավոր, հանձնելը պարտադիր է) եւ ֆիզիկա**(գրավոր), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու* (գրավոր):

ե) Ագրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում, ագրարային քաղաքականություն եւ տարածաշրջանի զարգացում, ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում, ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում եւ աուդիտ, սննդարդյունաբերության էկոնոմիկա եւ կառավարում, ապահովագրական գործ (ագրոպարենային համակարգի), ագրոբիզնես եւ շուկայաբանություն, այդ թվում առեւտուր եւ շուկայաբանություն մասնագիտացմամբ, հողագույքային հարաբերություններ - մրցութային քննություններ՝ մաթեմատիկա (գրավոր), հայոց լեզու (գրավոր), օտար լեզու (գրավոր):

Օգոստոսի 25-ից սեպտեմբերի 30-ը ագրարային համալսարանը դիմորդների համար կազմակերպում է անվճար նախապատրաստական դասընթացներ ընտրած մասնագիտության ընդունելության քննությունների առարկաներից: Դասընթացներին մասնակցելու համար դիմորդը կարող է ցուցակագրվել փաստաթղթերը հանձնելիս:

Հանրապետության բուհերի ցերեկային բաժինների 2009-2010թ. ընդունելության միասնական քննությունները հաջողությամբ հանձնած, սակայն տարբեր պատճառներով բուհերի ցերեկային բաժինները չընդունված դիմորդները կարող են ընդունվել ՀՊԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտ՝ հանձնած քննությունների արդյունքների հիման վրա կամ մասնակցելու ընդունելության քննություններին (քննությանը) գնահատականը բարձրացնելու նպատակով:

Դիմորդները ընդունող հանձնաժողովին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը.

- դիմում (ըստ ՀՊԱՀ-ում հաստատված միասնական ձեւի),
- կրթության մասին վկայականի բնագիրը,
- 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
- քաղվածք աշխատանքային գրքույկից (գյուղացիական եւ կոլեկտիվ տնտեսություններում աշխատողները ներկայացնում են տեղեկանք գյուղական համայնքից),
- նպատակային տեղերում ընդունվող դիմորդները ներկայացնում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրված համապատասխան գործուղման ձեւ,
- լրացուցիչ տեղեկանքներ (տեղեկանք՝ 1-ին եւ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զին.ծառայող ծնողի զոհվելու մասին, հանրապետական կամ միջազգային օլիմպիադաներին մասնակցելու մասին փաստաթուղթ),
- դիմորդներն անձնագիրն ու զին.գրքույկը (տեղեկանք զին. կոմիսարիատից՝ ժամկետային ծառայության անցնելու մասին) ներկայացնում են անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ օգոստոսի 3-ից հոկտեմբերի 2-ը ՀՊԱՀ 2-րդ մասնաշենքի 430 սենյակում:

Ընդունելության քննությունները՝ հոկտեմբերի 4-ից հոկտեմբերի 20-ը, մրցութային ընտրությունը՝ նոյեմբերի 1-ից 5-ը: Ուսումնական պարապմունքները սկսվում են նոյեմբերի 15-ից:

Մանրամասների համար դիմել ՀՊԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտ (ք. Երեւան, Տերյան 74, 2-րդ մասնաշենք, 430 սենյակ, հեռ. 56-23-25):

*ՌԵԿՏՈՐԱՏ*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: